



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-31-Ո-Կ-19

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՄԵԽԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

11 մայիսի 2026 թվական

ք. Երևան

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

*մասնակցությամբ՝
անդամներ*
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑԻ
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԷԴ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Արդարադատության նախարարի տեղակալ Տ. ԴԱԴՈՒՆՑԻ

Արդարադատության նախարարի ներկայացուցիչ Ն. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ

*Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր* Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

դռնբաց նիստում, քննության առնելով Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի՝ «Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2026 թվականի մարտի 16-ի թիվ 24-Ա որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Արդարադատության նախարարությունում 18.08.2025 թվականին ստացված Ա. Կ.-ի (այսուհետ նաև՝ Հաղորդում ներկայացրած անձ) բողոքը՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանի (այսուհետ նաև՝ Դատավոր կամ Դատարան) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ (այսուհետ՝ Հաղորդում):

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի (այսուհետ նաև՝ Նախարար) 14.01.2026 թվականի թիվ 06-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Նախարարի 16.03.2026 թվականի թիվ 24-Ա որոշմամբ միջնորդություն (այսուհետ նաև՝ Միջնորդություն) է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Խորհրդի 06.04.2026 թվականի որոշմամբ նշանակվել է դատական նիստ:

Խորհրդի 13.04.2026 թվականին նշանակված դատական նիստը հետաձգվել և հաջորդ դատական նիստը նշանակվել է 27.04.2026 թվականին:

27.04.2026 թվականին նշանակված դատական նիստում Խորհրդի անդամ Մերի Համբարձումյանին հայտնված բացարկի և Քրիստինե Մկոյանի կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունները բավարարվել են:

27.04.2026 թվականին տեղի ունեցած նիստում գործի քննությունը ավարտվել է և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 11.05.2026 թվականին:

2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը

Նախարարը, վկայակոչելով Սահմանադրության 16-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔԴՕ) 6-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ հոդվածը, 201-րդ, 202-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 234.1-րդ հոդվածը, 234.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, նույն հոդվածի 3-րդ մասը, 234.4-րդ հոդվածի 6-րդ մասը, 361-րդ հոդվածի 1-ին մասի 1-15-րդ կետերը, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, նշել է, որ վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ի կատարումն Սահմանադրությամբ ամրագրված նորմ-սկզբունքի, նպատակ ունենալով ապահովել ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական բջջի հատուկ պաշտպանությունը, ընտանիքում բռնության ցանկացած տեսակի դրսևորման կանխարգելումը, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը, ընդունել է հատուկ օրենք, որով, ի թիվս այլնի, սահմանվել են բռնության ենթարկված անձանց պաշտպանության հատուկ միջոցների տեսակները՝ նախազգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը և պաշտպանական որոշումը:

Ընդ որում՝ Օրենքի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ պաշտպանական որոշման ընդունումը բռնության ենթարկված անձի պաշտպանության քաղաքացիաիրավական մեխանիզմ է, որի կայացման համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող դիմումին ներկայացվող պահանջներին, դրանք քննելու կարգին, դատարանի կողմից ընդունվող ակտերին, դրանք բողոքարկելու կարգին, ինչպես նաև պաշտպանական որոշման դադարման հիմքերին առնչվող հարցերի կարգավորումը վերապահված է Քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Նախարարը նշել է, որ վերը վկայակոչված իրավանորմերի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ Օրենքով ամրագրված ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներից պաշտպանական որոշում կայացնելու վերաբերյալ հայցադիմումի քննությունն իրականացվում է հատուկ հայցային վարույթի կարգով: Ընդ որում՝ հայցադիմումին ներկայացվող, տվյալ վարույթի առանձնահատկությունից բխող պարտադիր պահանջները հստակ և սպառիչ սահմանված են ՔԴՕ 234.2-րդ հոդվածի 2-րդ մասով: Ինչ վերաբերում է նույն հոդվածի 3-րդ մասին, ապա հայցադիմումին կից պատասխանողի նկատմամբ ընդունված նախազգուշացման և (կամ) անհետաձգելի միջամտության որոշումների ներկայացումը կրում է ոչ պարտադիր բնույթ, քանի որ նորմը շարադրելիս օրենսդիր կողմից օգտագործված «առկայության դեպքում» ձևակերպումից ուղղակիորեն բխում է, որ նախազգուշացման և (կամ) անհետաձգելի միջամտության որոշումների

հայցադիմումին կից դատարանին տրամադրելն ընդհանուր առմամբ ֆակուլտատիվ բնույթ է կրում:

Միջնորդությամբ բացահայտելով միջնորդության բովանդակությունը՝ Նախարարը գտնում է, որ մինչև պաշտպանական որոշման գործողության ժամկետի ավարտման պահը դատարանի կողմից պաշտպանական որոշման վերացման հարցը քննարկման առարկա կարող է դարձվել բացառապես ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից նման դիմում ներկայացնելու փաստի առկայության պայմաններում, ընդ որում միայն այն դեպքում, երբ ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն:

Վերոգրյալ իրավանորմերի հաշվառմամբ՝ Նախարարը նշել է, որ կարելի է արձանագրել, որ օրինականությունը՝ որպես սահմանադրաիրավական համընդհանուր սկզբունք, քաղաքացիական դատավարության շրջանակներում իր կոնկրետ դրսևորումն է ստացել, ի թիվս այլնի, քաղաքացիական դատավարության կարգով քննվող յուրաքանչյուր գործի վերջնարդյունք հանդիսացող դատական ակտին ներկայացվող պարտադիր պահանջի տեսքով: Ընդ որում՝ դատական ակտին ներկայացվող օրինականության պահանջը պահպանված է միայն այն դեպքում, երբ քննարկվող դատական ակտը կայացվել է տվյալ գործի առնչությամբ կիրառելի նորմերի պահանջների լիարժեք պահպանմամբ:

Վկայակոչված հոդվածի բովանդակությունից ըստ Նախարարի պարզ է դառնում, որ վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող ոչ բոլոր որոշումները: Այլ կերպ՝ հիշյալ հոդվածով նախատեսված դեպքերից բացի առաջին ատյանի դատարանի մնացյալ որոշումները վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն:

Սույն կարգապահական վարույթի հարուցման առիթ հանդիսացած Հաղորդման, կից նյութերի, ինչպես նաև «DataLex» դատական տեղեկատվական համակարգում զետեղված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է հետևյալը.

- 28.02.2025 թվականին Դատարանը կայացրել է «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշում, որով 6 ամիս ժամկետով կիրառվել են որոշակի պաշտպանական միջոցներ.

- Դատարանի 28.07.2025 թվականի որոշմամբ վերացվել է Դատարանի՝

28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշումը նախատեսված ժամկետի ավարտից՝ 28.08.2025 թվականից, 1 ամիս շուտ.

- Դատարանի 28.07.2025 թվականի դատական ակտի պատճառաբանական մասում Դատավորն արձանագրել է հետևյալը.

«(...) «DataLex» դատական տեղեկատվական համակարգում հասանելի տեղեկատվության համաձայն՝ ՀՀ վարչական դատարանը, դռնբաց դատական նիստում քննելով թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործն ըստ հայցի Ա. Մ.–ի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, երրորդ անձ՝ Ա. Կ.–ի՝ 30.01.2025 թվականի «Ընդանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումը, որպես հետևանք՝ 07.02.2025 թվականի որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին, վճռել է. "1. Ա. Մ.–ի հայցը բավարարել անվավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կուրայքի բաժնի 30.01.2025 թվականի «Ընդանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումը և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ՀՈԳ վարչության ՄՄԱՎ ԸԲԿ աշխատանքների գծով մեթոդական բաժնի ՀԿՀ ավագ տեսուչի 07.02.2025 թվականի որոշումը:

2. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես օրենքով սահմանված պետական տուրքի գումար”:

ՀՀ վարչական դատարանը մասնավորապես գտել է, որ «Ընդանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» 30.01.2025 թվականի որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է, քանի որ այն չի համապատասխանում հիմնավորվածության, պարզապահանջության և որոշակիության պահանջներին:

(...) անդրադառնալով թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 01.03.2025 թվականի վճռով հաստատված հանգամանքներին, Դատարանն արձանագրում է հետևյալը. Պաշտպանական որոշում կայացնելու անհրաժեշտության մասին հետևության Դատարանը հանգել է՝ հիմք ընդունելով «Ընդանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ»՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կուրայքի բաժնի թվականի որոշման պատճենը: Այսինքն՝ Ա. Մ.–ի կողմից նախկին կնոջ՝ Ա. Կ.–ի, նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառված լինելու մասին Դատարանի հետևությունները հիմնված են եղել բացառապես «Ընդանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ»՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կուրայքի բաժնի 30.01.2025 թվականի որոշման վրա: Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ Պաշտպանական որոշում կայացնելու հիմքը վերացել է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընդանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընդանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտարկությանը

պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընդհանրական և կենցաղային բնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն (ընդգծումը Դատարանինն է):

Բերված նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների՝ իրենց տառացի նշանակությամբ մեկնաբանման արդյունքում **Դատարանն արձանագրում է, որ պաշտպանական որոշումը վերացնելու հիմքերն սպառիչ չեն, և որ դրանց մեջ ներառված է նաև ընդհանրական և կենցաղային բնություն գործադրած անձի դիմումը՝ ընդհանրական և կենցաղային բնության ենթարկված անձի՝ դիտարկության պարբերաբար որոշակի գործողություններ կատարված լինելու հիմքով:**

Դատարանի գնահատմամբ հիշյալ նորմով չի սահմանափակվում պաշտպանական որոշումը վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու՝ շահագրգիռ անձի իրավունքը, եթե նշված անձը հիմնավորում է, որ առկա է պաշտպանական որոշումը վերացնելու այլ հիմք: (...):»:

• Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննարկելով Գործով Դատարանի 28.07.2025 թվականի «Պաշտպանական որոշումը վերացնելու մասին» որոշման դեմ Ա. Կ.-ի կողմից բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը, 05.09.2025 թվականին կայացրել է «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշում, այն հիմնավորմամբ, որ բողոքարկվել է Դատարանի 28.07.2025 թվականի «Պաշտպանական որոշումը վերացնելու մասին» որոշումը, որի բողոքարկման ենթակա լինելու մասին որևէ դրույթ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, այսինքն՝ առկա է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու օրենսդրական արգելք:

Համաձայն Միջնորդության՝ վկայակոչված փաստական հանգամանքները համադրելով վերը մեջբերված իրավակարգավորումների և իրավական վերլուծությունների հետ՝ հարկ է փաստել, որ Դատարանը 28.07.2025 թվականի որոշմամբ վերացրել է Դատարանի՝ 28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշումը նախատեսված ժամկետի ավարտից՝ 28.08.2025 թվականից, 1 ամիս շուտ՝ նման եզրահանգում կատարելու հիմքում դնելով այն հանգամանքը, որ թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործով Վարչական դատարանի 01.03.2025 թվականի վճռով անվավեր է ճանաչվել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի բաժնի 30.01.2025 թվականի «Ընտանիքում բնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումը, իսկ Դատարանը պաշտպանական որոշում կայացնելու անհրաժեշտության մասին հետևության հանգել է՝ հիմք ընդունելով «Ընտանիքում բնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի

որոշման պատճենը: Այսինքն՝ Ա. Մ.-ի կողմից նախկին կնոջ՝ Ա. Կ.-ի, նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառված լինելու մասին Դատարանի հետևությունները հիմնված են եղել բացառապես «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ»՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի 30.01.2025 թվականի որոշման վրա:

Դատարանի 28.07.2025 թվականի որոշմամբ Դատարանի՝ 28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» 6 ամսվա գործողությամբ որոշումը նախատեսված ժամկետի ավարտից՝ 28.08.2025 թվականից, 1 ամիս շուտ վերացնելով՝ Դատարանը պաշտպանական որոշման վերացման հիմքում դրել է այնպիսի հանգամանք, որը նախատեսված չէ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Այլ կերպ՝ Դատարանն արձանագրել է, որ պաշտպանական որոշումը վերացնելու հիմքերն սպառիչ չեն և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով չի սահմանափակվում պաշտպանական որոշումը վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու՝ շահագրգիռ անձի իրավունքը, եթե նշված անձը հիմնավորում է, որ առկա է պաշտպանական որոշումը վերացնելու այլ հիմք, մինչդեռ ինչպես իրավահարաբերության ծագման պահին, այնպես էլ ներկայումս գործող խմբագրությամբ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է պաշտպանական որոշման վերացման մեկ հիմք, որը միակն է, որպիսի պայմաններում ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքի ապացուցված չլինելու պայմաններում Դատարանը վերացրել է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի պաշտպանության միջոց հանդիսացող պաշտպանական որոշումը առանց բավարար իրավական և փաստական հիմքերի: Պաշտպանական որոշման վերացման համատեքստում Դատարանը քննարկման առարկա կարող էր դարձնել բացառապես օրենսդրի կողմից ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքը՝ դրա առկայության կամ բացակայության մասին պատշաճ հետևության հանգելու պայմաններում կայացնելով այդ եզրահանգմանը համապատասխանող որոշում, մինչդեռ հակառակ մոտեցման պայմաններում Դատավորի կողմից կայացվող դատական ակտը չի համապատասխանի դատական ակտին ներկայացվող օրինականության պարտադիր պահանջին, իսկ Դատավորի գործողություններն ուղղակիորեն կհակասեն օրինականության սկզբունքին:

Հարկ է նկատել նաև, որ «Պաշտպանական որոշումը վերացնելու մասին» դատական ակտը ՔԴՕ 361-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ենթակա չէ վերաքննության կարգով բողոքարկման, որպիսի իրավաչափ եզրահանգման է եկել նաև Վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ 28.07.2025 թվականի «Պաշտպանական որոշումը վերացնելու մասին» որոշման դեմ Ա. Կ.-ի կողմից բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկելու արդյունքում՝ 05.09.2025 թվականին կայացնելով «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշում, այն հիմնավորմամբ, որ բողոքարկվել է Դատարանի 28.07.2025 թվականի «Պաշտպանական որոշումը

վերացնելու մասին» որոշումը, որի բողոքարկման ենթակա լինելու մասին որևէ դրույթ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, այսինքն՝ առկա է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու օրենսդրական արգելք:

Վերոգրյալի արդյունքում Նախարարը գտել է, որ Դատավորի գործողությունների հետևանքով էականորեն սահմանափակվել են խոցելի իրավիճակում գտնվող ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված Հաղորդում ներկայացրած անձի հիմնարար իրավունքներն ու օրինական շահերը: Մասնավորապես՝ վերջինս սահմանված ժամկետի ավարտից շուրջ մեկ ամիս շուտ առանց բավարար իրավական հիմքերի զրկվել է իրեն տրամադրված պաշտպանության միջոցից՝ պաշտպանական որոշմամբ նախատեսված իրավական երաշխիքներից օգտվելու հնարավորությունից: Հատկանշական է, որ դատարանի կողմից 28.07.2025 թվականին կայացված «Պաշտպանական որոշումը վերացնելու մասին» դատական ակտը գործող իրավակարգավորման պայմաններում վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ, ինչի հետևանքով Հաղորդում ներկայացրած անձը զրկվել է այդ ակտի օրինականությունը վերադաս դատական ատյանում վիճարկելու հնարավորությունից և, ըստ էության, չի կարողացել օգտվել իր սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ կառուցակարգից:

Նման պայմաններում, Լիազոր մարմնի գնահատմամբ, Դատավորի կողմից թույլ են տրվել ՔԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածով, 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Անդրադառնալով դատավորի կողմից թույլ տրված արարքի՝ մեղավորությամբ կատարված լինելու հանգամանքին, Նախարարն իր միջնորդության մեջ հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետ կետերին, ինչպես նաև նույն հոդվածի 5-րդ մասին, գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության և մեջբերված իրավական նորմերի համադրման արդյունքում գտել է, որ Դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են մեղավորությամբ, որոնք դրսևորվել են կոպիտ անփութությամբ: Հաշվի է առնվել նաև հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում Դատավորի կողմից իրեն վերագրվող խախտման հանգամանքների և պատճառների, խախտման իրավական գնահատականի վերաբերյալ Բացատրությամբ ներկայացված փաստարկները, ինչպես նաև վարույթ հարուցած մարմնի կողմից խախտումները դիտավորությամբ կատարելու մասով ապացուցված չլինելու հանգամանքը: Նախարարը եզրակացրել է, որ Դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Անդրադառնալով Դատավորի այն փաստարկին, որ Վարչական դատարանը գտել է, որ «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի

միջամտություն կիրառելու վերաբերյալ» 30.01.2025 թվականի որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է, քանի որ այն չի համապատասխանում հիմնավորվածության, պատճառաբանվածության և որոշակիության պահանջներին, ուստի Գործով հաստատված է վարչական մարմնի կողմից նախկինում ընդունված այն որոշման վերացումը, որը հիմք է հանդիսացել պաշտպանական որոշման կայացման համար, ինչը, Դատավորի ընկալմամբ, հանգեցնում է նրան, որ՝ վերանում են պաշտպանական որոշման կայացման հիմքում ընկած փաստական և իրավական հանգամանքերը, պաշտպանական որոշումը զրկվում է իր իրավական հենարանից և պաշտպանական միջոցի պահպանումը դառնում է իրավական նպատակ չունեցող, Լիազոր մարմինը հարկ է համարել նախևառաջ արձանագրել, որ Վարչական դատարանի կողմից «անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշման» իրավաչափությունը գնահատվել է բացառապես որոշման իրավական հիմքերի համատեքստում, այն է՝ դատարանի կողմից քննարկման առարկա է դարձվել վարչական մարմնի կողմից որոշման կայացման ընթացակարգին առաջադրվող պահանջների պահպանվածության հարցը՝ հատկապես բռնություն գործադրած անձի լսված լինելու իրավունքի ապահովվածության համատեքստում, որպիսի պայմաններում Վարչական դատարանը որևէ դիրքորոշում չի հայտնել որոշման փաստական հիմքի, այն է՝ բռնության փաստի առկայության/բացակայության մասով:

Բացի այդ՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի պաշտպանության կազմակերպման նպատակով օրենսդիրը սահմանել է պաշտպանության մի քանի միջոցներ, որոնցից պաշտպանական որոշման կայացումն իր բնույթով անձի պաշտպանության քաղաքացիաիրավական մեխանիզմն է, որն անկախ է վարչաիրավական մեխանիզմից (նախագգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում): Նման պայմաններում անձի նկատմամբ պաշտպանական որոշում կիրառելու անհրաժեշտության հարցը քննության ենթարկելիս դատարանը կաշկանդված չէ որևէ հանգամանքով, այդ թվում՝ անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշման առկայության կամ բացակայության փաստով:

Հաջորդիվ՝ Բացատրությամբ ներկայացված՝ «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն, որպիսի պայմաններում Դատավորի ընկալմամբ մեկնաբանվող նորմով «նաև»-ը նշանակում է, որ օրենսդիրը չի փակել պաշտպանական միջոցի վերացման հիմքերի ցանկը և այդ ցանկը ոչ սպառիչ է» փաստարկի առնչությամբ հարկ է

պարզաբանել օրենսդրի կողմից օգտագործված «պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև» ձևակերպումը:

Այսպես՝ մինչև 12.04.2024 թվականի ՀՕ-171-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը դրանում նշված ժամկետից շուտ կարող է վերացվել դատարանի կողմից՝ ընտանիքում բռնություն գործադրած և ընտանիքում բռնության ենթարկված անձանց՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված կարգով կնքված հաշտության դեպքում: Ընտանիքում բռնության ենթարկված կամ բռնություն գործադրած անձը պաշտպանական որոշումը վերացնելու նպատակով դատարան է ներկայացնում դիմում և աջակցության կենտրոնի մասնակցությամբ կնքված հաշտության համաձայնությունը: Պաշտպանական որոշումը վերացնելու մասին որոշումը դատարանը կայացնում է առանց նիստ հրավիրելու:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.04.2024 թվականի ՀՕ-171-Ն օրենքի ընդունմամբ օրենսդիրը հրաժարվեց հաշտության կառուցակարգի կիրառման հիմքով պաշտպանական որոշման վերացման հնարավորությունից, այն հիմնավորմամբ, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում հաշտեցման ընթացակարգի սահմանումը գործնականում խոչընդոտում է բռնության ենթարկված անձանց հասնելու արդյունավետ իրավական պաշտպանության եւ խախտված իրավունքի վերականգնման, հաշտեցման գործընթացը հակադրվում է ընտանեկան բռնության դեպքերի բարձր հանրային վտանգավորության, տուժողի բողոքից անկախ քրեորեն հետապնդելի լինելու եւ համաչափ, արդարացի ներգործության միջոցներ պահանջելու սահմանված ուղենիշերի հետ, ինչի արդյունքում ՀՕ-171-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչվեց:

Օրենսդրական հիշյալ փոփոխության արդյունքում Գործով քննության ենթարկվող իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ առկա է հետևյալ նշումը, «(մասն ուժը կորցրել է 12.04.24 ՀՕ-171- Ն)»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է փաստել, որ օրենսդրի կողմից ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասում տեղ գտած «պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև» ձևակերպումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկինում պաշտպանական որոշման վերացման ևս մեկ հիմք է նախատեսված եղել, որը սահմանող նորմը, սակայն, իր ուժը կորցրել է, որպիսի պայմաններում ներկա

իրավակարգավորումների ուժով Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը պաշտպանական որոշման վերացման միայն 1 հիմք է նախատեսում:

Ինչ վերաբերում է Դատավորի կողմից «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի վկայակոչմանը, որով սահմանվում է՝ եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ, հարկ է նկատել, որ հիշյալ դրույթը կիրառելի չէ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթի մեկնաբանման առնչությամբ, քանի որ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասում օգտագործվում է «նաև» շաղկապը, մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասը վերաբերում է «ինչպես նաև» բառերի գործածմանը, ընդ որում այն կոնկրետ դեպքում, երբ միևնույն նորմի կիրառումը պայմանավորված է միաժամանակ մի քանի պայմաններով, որոնք միմյանցից բաժանված են «ինչպես նաև» բառերով, մինչդեռ քննարկվող նորմը պաշտպանական որոշման վերացման ինքնուրույն հիմք է, որի կիրառումը օրենսդիրը չի պայմանավորել «ինչպես նաև» բառերով բաժանված մի քանի պայմաններով:

Անդրադառնալով Դատավորի «Երկրորդ հանգամանքն է դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, որը ցույց տվեց, որ մի շարք գործերով, օրինակ՝ ԵԴ2/6039/02/24 և ԵԴ2/7969/02/24 քաղաքացիական գործերով, դատարանները, արդեն իսկ օրինական ուժ ստացած որոշումներով նման գնահատական են տվել պաշտպանական որոշման վերացման հիմքերի բազմազանության վերաբերյալ» փաստարկին, հարկ է արձանագրել, որ «DataLex» դատական տեղեկատվական համակարգում գետեղված տեղեկատվության համաձայն՝ թիվ ԵԴ2/6039/02/24 քաղաքացիական գործի փաստական հանգամանքները ոչ միայն նույնական չեն, այլև էականորեն տարբերվում են գործի փաստական հանգամանքներից: Այսպես՝ թիվ ԵԴ2/6039/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում կայացված պաշտպանական որոշումը վերացնելու վերաբերյալ դատական ակտի պատճառաբանական մասում դատարանն արձանագրել է հետևյալը.

«Դատարանը, ուսումնասիրելով դիմումը, կից ներկայացված ապացույցները, արձանագրում է, որ Դատարանի կողմից 13.08.2024 թվականին կայացվել է պաշտպանական որոշում, որը հիմնված է եղել բացառապես Հայցվորի կողմից ներկայացված դիրքորոշման, փաստական և իրավական հիմքերի վրա և Դատարանին հայտնի չեն եղել այնպիսի փաստեր և հանգամանքներ, որոնք ներկայացվել են դիմող Վ. Ս.-ի կողմից: Մասնավորապես Դատարանին է ներկայացվել «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի /Այբ դպրոց/ գործադիր տնօրեն Դ. Ս.-ի կողմից 26.08.2024թ. տրված թիվ SU-24-087 տեղեկանքը, որով ապացուցվում է, որ Դիմողն աշխատում է «Այբ կրթական հանգույց» հիմնադրամում /Այբ դպրոց/, իսկ դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշման մեջ արգելվել է նրան

այցելել «Այբ կրթական հանգույց» հիմնադրամ, ինչը ստեղծում է կազուսային իրավիճակ և վերջինիս իրավունքների խախտման կարող է հանգեցնել: Դատարանն արձանագրում է նաև, որ Դիմողի կողմից ներկայացվել են հիմնական դպրոցի տնօրեն Ս. Ն.-ի կողմից 26.08.2024թ. տրված թիվ SU-24-087 տեղեկանքի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ը, մարմնակրթության առարկայախմբի ղեկավար Ա. Հ.-ի կողմից տրված 26.08.2024թ. թիվ SU-24-087 տեղեկանքի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ը և ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կ. Հ.-ի կողմից տրված բնութագրերը, որոնցով ապացուցվում է այն հանգամանքը, որ Դիմողը ցուցաբերում է պատշաճ վարքագիծ և՛ աշխատավայրում, և՛ իր բնակության վայրում: Դիմողի կողմից ներկայացված փաստական հանգամանքներից պարզ է դառնում նաև, որ իր նկատմամբ նույնպես կիրառվել է բռնություն, մասնավորապես քննիչ Լ. Բ.-ի 09.08.2024թ. որոշմամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ԵԲՎ Մաշտոցի բաժնում Վ. Գ.-ի Ս.-ի հաղորդման հիման վրա նախաձեռնվել է թիվ 10169324 քրեական վարույթը, որով արձանագրվել է, որ Շ. Ս.-ի մայրը և հայրը հարձակվել են վերջինիս վրա և վերոնշյալ քրեական գործի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից իրականացված փորձագետ Վ. Զ.-ի թիվ 1273 դատաբժշկական եզրակացությամբ պարզվել է, որ Վ. Ս.-ը ստացել է մարմնական վնասվածքներ (...):

Դատարանն արձանագրում է նաև, որ Պաշտպանական որոշմամբ արգելվել է նաև Վ. Ս.-ին 200 մետր հեռավորությունից ավելի մոտենալ հայցվոր՝ Շուշաննա Գնելի Սարգսյանին, սակայն դիմողի կողմից ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավար Ն. Ս.-ի 19.07.2024թ. թիվ 3996-Ա որոշումը, որով բավարարվել է Վ. Գ.-ի Ս.-ի դիմումը և սահմանվել է երեխա Մ. Վ.-ի Ս.-ի հետ տեսակցության օր՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ՝ ժամը 17:30-19:00, բնակության վայրի այգում մոր ներկայությամբ: Պաշտպանական որոշում կայացնելիս Դատարանին հայտնի չի եղել վերը նշված հանգամանքը և ստեղծվում է հակասություն, մինչդեռ համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի, եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել, ապա այն կիրառելիս առաջնահերթ հաշվի են առնվում երեխայի լավագույն շահերը, որից ելնելով Դատարանը գտնում է, որ առաջնահերթություն պետք է տալ երեխայի լավագույն շահերին և չզրկել նրան իր հոր հետ շփումներից, որը տեղի է ունենալու մոր ներկայությամբ:

Դատարանը, վերոգրյալի լույսի ներքո դիտարկելով դիմումը, համադրելով գործով ներկայացված ապացույցները, գտնում է, որ դիմումը ենթակա է բավարարման և պետք է վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 13.08.2024թ. թիվ ԵԴ2/6039/02/24 քաղաքացիական գործով կայացված պաշտպանական որոշումը»:

Վերը մեջբերվածից, ըստ Նախարարի, ակնհայտ է, որ Դատավորի կողմից վկայակոչված թիվ ԵԴ2/6039/02/24 քաղաքացիական գործի և սույն կարգապահական վարույթի հիմքում ընկած Գործի փաստական հանգամանքները միանգամայն տարբեր են, քանի որ պաշտպանական որոշման վերացման հիմքում սույն դեպքում չի դրվել «անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշման վերացման հանգամանքը, նման հանգամանք սույն գործի շրջանակներում առհասարակ քննարկման առարկա չի դարձվել, այլ դատարանի կողմից քննության են ենթարկվել մինչ այդ դատարանին անհայտ որոշակի այլ փաստական հանգամանքներ: Միաժամանակ հարկ է հավելել, որ թիվ ԵԴ2/6039/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում կայացված որոշման մեջ դատավորի կողմից որևէ դիրքորոշում չի հայտնվել ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի առնչությամբ:

Ինչ վերաբերում է թիվ ԵԴ2/7969/02/24 քաղաքացիական գործին՝ Նախարարը հարկ է համարել արձանագրել, որ անգամ եթե ընդունենք այն հանգամանքը, որ քննարկվող գործի շրջանակներում դատավորի կողմից կայացված ակտի պատճառաբանական մասում առկա են որոշակի դատողություններ պաշտպանական որոշման վերացման հիմքերի բազմազանության վերաբերյալ, առնվազն ողջամիտ չէ մեկ դատական ակտում տեղ գտած դատողությունները որակել որպես ձևավորված դատական պրակտիկա:

Ինչ վերաբերում է Դատավորի կողմից ներկայացված այն փաստարկին, որ արարքը որևէ հետևանք չի առաջացրել, քանի որ հաղորդման բովանդակությունից չի հետևում, որ պաշտպանական որոշման մեկ ամիս շուտ վերացումը առաջացրել է որևէ իրավական կամ փաստական բացասական հետևանք, այդ թվում՝ բռնության նոր դրսևորում, վտանգի առաջացում կամ անձի իրավունքների սահմանափակում, հարկ է նշել, որ Լիազոր մարմնի 05.02.2026 թվականի Ե-7/2026 գրությամբ Հաղորդում ներկայացրած անձին առաջարկվել է տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե Դատավորի կողմից կայացված 28.07.2025 թվականի որոշմամբ՝ դատավորի 28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» 6 ամսվա գործողությամբ որոշումը նախատեսված ժամկետի ավարտից՝ թվականից, 1 ամիս շուտ վերացնելն ինչ հետևանքներ է առաջացրել Հաղորդում ներկայացրած անձի կամ վերջինիս երեխայի համար, ինչին ի պատասխան՝ Արդարադատության նախարարությունում 11.03.2026 թվականին ստացվել են Հաղորդում ներկայացրած անձի կողմից տրամադրված լրացուցիչ նյութեր, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Դատարանի կողմից պաշտպանական որոշումը սահմանված ժամկետի ավարտից շուտ վերացնելուց հետո Հաղորդում ներկայացրած անձը մի շարք հաղորդումներ, դիմում-բողոքներ է ներկայացրել պետական տարբեր գերատեսչություններ, այդ թվում՝ Ներքին գործերի նախարարություն և Դատախազություն, որով հայտնել է, որ իր և իր անչափահաս երեխայի նկատմամբ շարունակվում են, ընդ որում՝ պաշտպանական որոշման վերացումից հետո առավել

ինտենսիվ, Ա. Մ.-ի կողմից հետապնդումները, ֆիզիկական և հոգեբանական բռնությունը, սպառնալիքները, Հաղորդում ներկայացրած անձի մասին իրականությանը չհամապատասխանող զրպարտչական տեղեկությունների տարածումը, ինչի առնչությամբ առկա է նաև նախաձեռնված քրեական վարույթ: Նման պայմաններում առարկայազուրկ է Դատավորի այն փաստարկը, որ պաշտպանական որոշման մեկ ամիս շուտ վերացումը չի առաջացրել որևէ իրավական կամ փաստական բացասական հետևանք, այդ թվում՝ բռնության նոր դրսևորում, վտանգի առաջացում կամ անձի իրավունքների սահմանափակում, քանի որ Հաղորդում ներկայացրած անձի կողմից ներկայացված տեղեկատվության, ինչպես նաև դրանք հիմնավորող համապատասխան ապացույցների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել որջամիտ հետևության, որ պաշտպանական որոշման վերացումից հետո առանց իրավական պատշաճ պաշտպանության մնացած Հաղորդում ներկայացրած անձը և վերջինիս անչափահաս երեխան հայտնվել են առավել խոցելի և թիրախավորված վիճակում:

Անդրադառնալով Բացատրությամբ ներկայացված այն փաստարկին, որ Դատարանը դեռևս 28.02.2025 թվականին կայացված պաշտպանական որոշմամբ արձանագրել է, որ հիշյալ որոշման հիմք է հանդիսացել բացառապես ՆԳՆ Ոստիկանության ՀՈԳՎ Կոտայքի բաժնի ավագ տեսուչ Գ. Խաչատրյանի կողմից 30.01.2025թ. կայացված ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումը՝ հարկ է նշել, որ ՔԴՕ 234.3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Վկայակոչված իրավանորմերի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ հիշյալ հատուկ հայցային վարույթի քննության առնչությամբ օրենսդիրը որդեգրել է քաղաքացիական դատավարության ընդհանուր տրամաբանությունից շեղվող քաղաքականություն, այն է՝ հիշյալ վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքները դատարանի կողմից պարզվում են ի պաշտոնե, այսինքն՝ դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Գործի քննության (“ex officio”) կառուցակարգ նախատեսելը պայմանավորված է քննարկվող վարույթի առարկա

գործերի բնույթով, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն առավել ամբողջական և արդյունավետ կազմակերպելու համար դատարանը պետք է հնարավորություն ունենա ակտիվ ներգործություն ունենալ գործի փաստական հանգամանքները բացահայտելու համատեքստում:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդրի կողմից հիշյալ հատուկ հայցային վարույթի առարկա գործերի բնույթով պայմանավորված գործի քննության (“ex officio”) կառուցակարգ նախատեսելու պայմաններում առնվազն առարկայազուրկ է Դատավորի այն պնդումը, որ վերջինս պաշտպանական որոշման կայացման հիմքում դրել է բացառապես մեկ հանգամանք, քանի որ Դատարանը տվյալ դեպքում պարտավոր էր գործի փաստական հանգամանքերն ի պաշտոնե պարզել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու ուղղությամբ, ինչը չէր կարող սահմանափակվել միայն «անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշման» առկայության հանգամանքը գնահատման արժանացնելով:

Բացատրությամբ բերված մյուս փաստարկները հերքվում են սույն միջնորդությամբ ներկայացված հիմնավորումներով: Այսպիսով, վերոնշյալը վկայում է, որ Դատավորի կողմից Բացատրությամբ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն:

Նշանակված դատական նիստում վարույթ հարուցած մարմնի ներկայացուցիչը պնդել է ներկայացված միջնորդությունը:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ

Դատավորը Նախարարին ներկայացրած բացատրությամբ (համառոտագրված) միջնորդել է կարճել կարգապահական վարույթը՝ ներկայացնելով հետևյալ փաստարկները.

3.1.1 Վարչական դատարանը մասնավորապես գտել է, որ «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» 30.01.2025 թվականի որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է, քանի որ այն չի համապատասխանում հիմնավորվածության, պատճառաբանվածության և որոշակիության պահանջներին: (...) Գործով հաստատված է վարչական մարմնի կողմից նախկինում ընդունված այն որոշման վերացումը, որը հիմք է հանդիսացել պաշտպանական որոշման կայացման համար: Վարչական ակտի վերացումը հանգեցնում է նրան, որ՝ վերանում են պաշտպանական որոշման կայացման հիմքում ընկած փաստական և իրավական հանգամանքերը, պաշտպանական որոշումը

զրկվում է իր իրավական հենարանից և պաշտպանական միջոցի պահպանումը դառնում է իրավական նպատակ չունեցող:

3.1.2 ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն: Դատարանի ընկալմամբ «նաև»-ը ցույց է տալիս, որ օրենսդիրը գիտակցաբար ընդլայնել է պաշտպանական որոշման վերացման հնարավորությունները, ստեղծել է բացառիկ, լրացուցիչ մեխանիզմ, այն չի համարվում ընդհանուր կանոնի պարզ կիրառություն, այլ հատուկ կարգավորում է: Դատարանի գնահատմամբ՝ հիշյալ նորմով չի սահմանափակվում պաշտպանական որոշումը վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու՝ շահագրգիռ անձի իրավունքը, եթե նշված անձը հիմնավորում է, որ առկա է պաշտպանական որոշումը վերացնելու այլ հիմք: Դատավորի ընկալմամբ մեկնաբանվող նորմով «նաև»-ը նշանակում է, որ օրենսդիրը չի փակել պաշտպանական միջոցի վերացման հիմքերի ցանկը և այդ ցանկը ոչ սպառիչ է՝ շնորհիվ երկու հանգամանքների՝

Նախ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որը սահմանում է նորմատիվ իրավական ակտում որոշ շաղկապների և բառերի կիրառումը, որի 7-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:

Հատկանշական է, որ Դատարանի կայացրած որոշման մեջ կիրառված նորմում չի օգտագործվում «միայն», «բացառապես», «սույն դեպքում միայն» բառերը, որոնց պարագայում, Դատարանը սահմանափակված կլիներ վերացնել իր որոշումը, միայն եթե չհիմնավորեր, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն:

Այսինքն, նորմի նման ձևակերպման պայմաններում, Դատարանը գտել է, որ օրենսդիրը, օգտագործելով «նաև» շաղկապը, չի սահմանափակել պաշտպանական որոշման վերացման հիմքերի շրջանակը միայն ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասում բառացիորեն նշված դեպքով, այլ հնարավորություն է տվել դատարանին գնահատել նաև այլ հանգամանքներ, որոնք իրենց էությանը համարժեք են նշվածին և ուղղված են պաշտպանական որոշման իրականացման վերացմանը՝ պաշտպանական որոշումը

վերադասության կարգով անբողոքարկելի լինելու պայմաններում հավասարակշռելով կողմերի իրավունքները:

Դատավորի գնահատմամբ «նաև»-ը կարող է մեկնաբանվել որպես՝ «ոչ միայն նշվածը, այլ նաև այլ՝ չմատնանշված, բայց համարժեք դեպքեր»:

3.1.3 Երկրորդ հանգամանքն է դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, որը ցույց տվեց, որ մի շարք գործերով, օրինակ՝ ԵԴ2/6039/02/24 և ԵԴ2/7969/02/24 քաղաքացիական գործերով, դատարանները, արդեն իսկ օրինական ուժ ստացած որոշումներով նման գնահատական են տվել պաշտպանական որոշման վերացման հիմքերի բազմազանության վերաբերյալ:

3.1.4 (...) Դատավորն անդրադարձե է նաև «մեկ ամիս շուտ» ձևակերպմանը, որը վարույթի հարուցման որոշման մեջ չի պարզաբանվում, թե տվյալ ժամանակային հանգամանքը ի՞նչ իրավական նշանակություն ունի, ի՞նչ իրավունքի իրացմանն է խոչընդոտել, կամ ի՞նչ բացասական հետևանք է առաջացրել հաղորդում ներկայացրած անձի համար: Իրականում հաղորդման բովանդակությունից չի հետևում, որ պաշտպանական որոշման մեկ ամիս շուտ վերացումը առաջացրել է որևէ իրավական կամ փաստական բացասական հետևանք, այդ թվում՝ բռնության նոր դրսևորում, վտանգի առաջացում կամ անձի իրավունքների սահմանափակում:

3.1.5 (...) Դատարանի 28.02.2025թ. կայացված որոշմամբ Դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ նշված որոշման հիմք է հանդիսացել միայն ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ՀՈԳՎ Կոտայքի բաժնի ավագ տեսուչ Գ. Խ.-ի կողմից 30.01.2025թ. կայացված ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումը:

Դատավորը Խորհրդին ներկայացրած բացատրությամբ մասնավորապես հայտնել է, որ 20.03.2026թ. ստացել է ՀՀ Արդարադատության նախարարի 16.03.2026թ. «Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» թիվ 24-Ա որոշումը, համաձայն որի Նախարարը գտել է, որ «Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանի կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի նորմերի՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածով, 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված պահանջների խախտումներ, այն է՝ Դատավորը 28.07.2025 թվականի որոշմամբ վերացրել է Դատարանի 28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշումը նախատեսված ժամկետի ավարտից 28.08.2025 թվականից, 1 ամիս շուտ՝ որոշման վերացման հիմքում դնելով այնպիսի հանգամանք, որը նախատեսված չէ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով»:

Կարգապահական վարույթ հարուցելու փաստական հիմքերի վերաբերյալ դատավորի դիրքորոշման համաձայն՝ թիվ ԿԴ/0253/02/25 քաղաքացիական գործով Դատարանի 28.02.2025թ. կայացված պաշտպանական որոշման հիմքում Դատարանը դրել է այն հանգամանքը, որ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ՀՈԳՎ Կոտայքի բաժնի ավագ տեսուչ Գ. Խ.-ի կողմից Ա. Ա.-ի Մ.-ի նկատմամբ կիրառվել է անհետաձգելի միջամտության պաշտպանական որոշում, ինչից հետևում է, որ վերջինս հանդիսանում է ընտանիքում բռնություն գործադրած ֆիզիկական անձ:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը սահմանում է պաշտպանության բնագավառում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և հասարակական կազմակերպությունների կողմից ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման ընդհանուր սկզբունքները, դրանց կանխարգելմանը և անձի պաշտպանությանն ուղղված գործիքակազմը, իսկ Դատարանի խնդիրն է պաշտպանական որոշման կիրառման միջոցով ընտանիքում բռնության նոր դրսևորումների կանխարգելումը: Ընդ որում, Դատարանի գնահատմամբ պաշտպանական որոշմամբ սահմանափակումներ նախատեսելիս Դատարանը պետք է հիմք ընդունի ընտանիքում իրականացված բռնության տեսակը, դրա ծանրությունը, բռնության ենթարկված անձանց առողջությանը և անվտանգությանը շարունակաբար սպառնացած վտանգի առկայությունը, բռնության աճը և դրա հետևանքները:

Թիվ ԿԴ/0253/02/25 քաղաքացիական գործում առկա փաստերի համաձայն՝ Գործում առկա նյութերի ուսումնասիրությունից Դատարանն արձանագրել է, որ գործում առկա են ապացույցներ՝ հայցվորի կողմից պատասխանողի վերաբերյալ իրավապահ մարմիններ հաղորդումներ ներկայացնելու մասին, սակայն առկա ապացույցներով չի հիմնավորվել Ա. Մ.-ի կողմից անչափահաս երեխայի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքները և հայցվորի բողոքներին իրավապահ մարմինների կողմից ընթացք չի տրվել:

Գործում առկա ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ՀՈԳՎ Կոտայքի բաժնի ավագ տեսուչ Գ. Խ.-ի կողմից 30.01.2025թ. կայացված ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումը, միայն որով և արձանագրվում է այն հանգամանքը, որ հայցվորը հանդիսանում է ընտանիքում բռնության ենթարկված անձ, նշում է, որ բռնությունը գործադրվել է, եղել է ֆիզիկական և հոգեբանական բնույթի, սակայն առկա չէ ապացույց այն մասին, որ այն կրել է շարունակական բնույթ: Հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ փաստարկ, որով կարող էր հաստատվել, որ առկա է ենթադրյալ բռնության ենթարկված անձի՝ Հայցվորի նկատմամբ ընտանեկան և կենցաղային բռնության նոր

դրսևորումներ իրականացնելու որևէ ռիսկ, կամ որ առկա է անչափահաս երեխա Մ. Ա.-ի Մ.-ի նկատմամբ ընտանեկան և կենցաղային բռնության նոր դրսևորումներ իրականացնելու որևէ վտանգ:

Մինչդեռ պաշտպանական որոշում կայացնելու համար ի թիվս այլի անհրաժեշտ է նաև այն փաստը, որ պատասխանողը հայցվորի հանդեպ գործադրած լինի այնպիսի բռնություն, որը թելադրում է նման դեպքերի կանխարգելման նպատակով օրենքով սահմանված միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն:

ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ՀՈԳՎ Կոտայքի բաժնի ավագ տեսուչ Գ. Խ.-ի կողմից 30.01.2025թ. կայացված ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կիրառված անհետաձգելի միջամտության որոշմամբ չկա արձանագրված որևէ փաստ, որ երեխայի և հոր շփումը չի բխում երեխայի շահերից, և ձևավորված պայմաններում երեխայի այս տարիքում շփումը հոր հետ կարող է բացասաբար անդրադառնալ նրա հոգեվիճակի և բարոյական զարգացման, ինչպես նաև հոգեկան առողջության վրա:

Ավելին, Դատարանը կայացված որոշմամբ արձանագրել է նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.11.2023թ. թիվ ԵԴ/45307/02/22 գործով կայացված որոշման համաձայն որոշվել է

«1. Միջնորդությունը բավարարել մասնակի՝ Դատարանի 05.12.2022թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը /ձևափոխված 15.02.2023թ., 21.03.2023թ. և 31.07.2023թ. որոշումներով/ ձևափոխել՝ սահմանել Ա. Ա.-ի Մ.-ի՝ իր անչափահաս երեխա Մ. Ա.-ի Մ.-ի հետ, բնակվող Ա. Ս.-ի Կ.-ի մոտ, տեսակցության հետևյալ կարգը.

Ա. Ա.-ի Մ.-ին թույլատրել յուրաքանչյուր երեքշաբթի, ժամը 17:00-ից մինչև 18:00-ն, անչափահաս երեխա Մ. Ա.-ի Մ.-ին /ձևված 04.10.2020թ./ վերցնել մանկապարտեզից, իսկ մանկապարտեզ գնացած չլինելու դեպքում՝ Ա. Կ.-ի բնակության վայրից կամ այն վայրից, որտեղ որ երեխան կգտնվի, շփվել նրա հետ՝ մինչև 22:00-ն, Ա. Կ.-ի բացակայությամբ՝ Ա. Կ.-ին պարտավորեցնելով որևէ եղանակով չխոչընդոտել երեխայի և Հայցվորի տեսակցության ու շփմանը: Ժամը 22:00-ին երեխային վերադարձնել Ա. Կ.-ի բնակության վայր:

Ա. Ա.-ի Մ.-ին թույլատրել յուրաքանչյուր հինգշաբթի՝ ժամը 17:00-ից մինչև 18:00-ն, անչափահաս երեխա Մ. Ա.-ի Մ.-ին /ձևված 04.10.2020թ./ վերցնել մանկապարտեզից, իսկ մանկապարտեզ գնացած չլինելու դեպքում՝ Ա. Կ.-ի բնակության վայրից կամ այն վայրից, որտեղ որ երեխան կգտնվի, շփվել նրա հետ՝ մինչև 22:00-ն, Ա. Կ.-ի բացակայությամբ՝ Ա. Կ.-ին պարտավորեցնելով որևէ եղանակով չխոչընդոտել երեխայի և Հայցվորի տեսակցության ու շփմանը: Ժամը 22:00-ին երեխային վերադարձնել Ա. Կ.-ի բնակության վայր:

Ա. Ա.-ի Մ.-ին թույլատրել յուրաքանչյուր շաբաթ օրը, անկախ երեխայի գտնվելու վայրից, ժամը 12:00-ից Մ. Ա.-ի Մ.-ին /ձևված 04.10.2020թ./ վերցնել և տեսակցել

գիշերակացով մինչև կիրակի ժամը 12:00-ն ընկած ժամանակահատվածում, Ա. Կ.-ի բացակայությամբ՝ Ա. Կ.-ին պարտավորեցնելով որևէ եղանակով չխոչընդոտել երեխայի և Հայցվորի տեսակցության ու շփմանը:

2. Սահմանված տեսակցության կարգից բացառություն են կազմում երեխայի առողջական այնպիսի վիճակը /բարձր ջերմաստիճան, վարակիչ հիվանդության առկայություն, և այլն/, երբ բժշկական ցուցումներով հակացուցված է նրա տեղափոխումը Ա. Կ.-ի բնակության վայրից, կամ այնպիսի եղանակային պայմաններում, երբ երեխայի տեղափոխումը մոր բնակության վայրից անվտանգ չէ /մերկասառույց, ուժգին ծյուն, և այլն/:

Ա. Կ.-ին և Ա. Մ.-ին պարտավորեցնել միմյանց տեղեկացնել նման իրավիճակների առկայության մասին»: Վերոգրյալից պարզ է դառնում, որ Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանը թիվ ԵԴ/45307/02/22 գործի շրջանակներում երեխայի լավագույն շահ է համարել երեխայի շփումը հոր հետ, առանց մոր ներկայության: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

Դատարանը 28.02.2025թ. որոշմամբ արձանագրել է, որ «...Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, կիրառված բռնության բնույթը և դրա հետևանքով հայցվորի մեջ հարուցված վախը՝ իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, ինչպես նաև առաջնորդվելով ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգության և պաշտպանության ապահովման առաջնայնության, ընտանիքի՝ որպես հասարակության բնական և հիմնական բջջի աջակցության, ընտանիքում ավանդական արժեքների ամրապնդման և ընտանիքում համերաշխության վերականգնման, երեխայի լավագույն շահերի առաջնահերթության սկզբունքներով, ինչպես նաև հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները և Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածն արգելում է ծնողի շահերից ելնելով թույլատրել նրան կատարելու այնպիսի գործողություններ, որոնք կվնասեն երեխայի առողջությանն ու զարգացմանը (տե՛ս, Johansen v. Norway գործով Եվրոպական դատարանի 07.08.1996 թվականի վճիռը, 78-րդ կետ), ուստի և արձանագրելով երեխայի լավագույն շահերի առաջնահերթության սկզբունքները, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում, գործով առկա չէ որևէ ապացույց կամ հանգամանք, որ պատասխանողը բռնություն է գործադրել անչափահաս երեխա Մ. Ա.-ի Մ.-ի նկատմամբ, կամ վերջինիս ծնողական իրավունքները սահմանափակված են, ավելին՝ թիվ ԵԴ/45307/02/22 գործի շրջանակներում Դատարանը երեխայի լավագույն շահ է համարել երեխայի շփումը հոր հետ, առանց մոր ներկայության: Դրա հետ մեկտեղ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորում է, որ հայցվորի և պատասխանողի հարաբերությունները գտնվում են լարված փուլում և կողմերի միջև առաջացած

յուրաքանչյուր տարածայնության ականատես չպետք է դարձվի անչափահաս երեխան, վեր դասելով երեխայի լավագույն շահը, Դատարանը գտնում է, որ պետք է կիրառել հետևյալ պաշտպանական միջոցը»:(...)

Այսինքն՝ Դատարանի 28.02.2025թ. կայացված որոշմամբ Դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ նշված որոշման համար հիմք է հանդիսացել միայն ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ՀՈԳՎ Կոտայքի բաժնի ավագ տեսուչ Գ. Խ.-ի կողմից 30.01.2025թ. կայացված ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումը, և միաժամանակ Դատարանը 28.02.2025թ. կայացված որոշմամբ արձանագրել է, որ թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործի շրջանակում Ա. Ա.-ի Մ.-ի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան 31.01.2025թ. կազմված «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանի 27.02.2025թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

Սակայն, Դատարանը նկատի ունենալով, որ տվյալ դեպքում, չնայած, որ գործով առկա չէ որևէ այլ ապացույց կամ հանգամանք, որ պատասխանողը բռնություն է գործադրել անչափահաս երեխա Մ. Ա.-ի Մ.-ի նկատմամբ, կամ վերջինիս ծնողական իրավունքները սահմանափակված են և ավելին, թիվ ԵԴ/45307/02/22 գործի շրջանակներում Դատարանը երեխայի լավագույն շահ է համարել երեխայի շփումը հոր հետ, առանց մոր ներկայության, այնուամենայնիվ, գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորված է համարել, որ հայցվորի և պատասխանողի հարաբերությունները գտնվում են լարված փուլում և կողմերի միջև առաջացած յուրաքանչյուր տարածայնության ականատես չպետք է դարձվի անչափահաս երեխան, վեր դասելով երեխայի լավագույն շահը, միաժամանակ նկատի ունենալով, որ առկա է «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշում, Դատարանը գտել է, որ պետք է կիրառել պաշտպանական միջոց՝ չանտեսելով թիվ ԵԴ/45307/02/22 գործի շրջանակներում Դատարանի կողմից կայացված հայցի ապահովում կիրառելու մասին որոշումը:

Ա. Ա.-ի Մ.-ի կողմից 23.07.2025թ. դիմում է ներկայացվել դատարան՝ պաշտպանական որոշումը վերացնելու պահանջի մասին:

Միջնորդության հիմքում դրվել է այ հանգամանքը, որ Թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործն ըստ հայցի Ա. Ա.-ի Մ.-ի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, երրորդ անձ՝ Ա. Ա.-ի Կ.-ի՝ 30.01.2025 թվականի «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումը, որպես հետևանք պահանջը՝ 07.02.2025 թվականի որոշումն անվավեր ճանաչել (վերացնել): Դատարանը 28.07.2025թ. կայացված որոշմամբ որոշել է. «1. Աշոտ Արմենի Մարգարյանի հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության

նստիկանության Կոտայքի բաժնի 30.01.2025 թվականի «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումը և ՀՀ ներքին գործերի նախարարության նստիկանության ՀՈԳ վարչության ՄՄԱՎ ԸԲԿ աշխատանքների գծով մեթոդական բաժնի ՀԿՀ ավագ տեսուչի 07.02.2025 թվականի որոշումը:

2. ՀՀ ներքին գործերի նախարարության նստիկանությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես օրենքով սահմանված պետական տուրքի գումար»:

Դատարանը 28.07.2025թ. կայացված որոշմամբ որոշել է. «Աշոտ Արմենի Մարգարյանի դիմումը բավարարել՝

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 28.02.2025թ. թիվ ԿԴ/0253/02/25 որոշումը՝ «Պաշտպանական որոշում կայացնելու մասին», վերացնել: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ»:

Նշված որոշման կայացման համար հիմք է հանդիսացել հետևյալը.

ՀՀ վարչական դատարանը մասնավորապես գտել է, որ «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» 30.01.2025 թվականի որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է, քանի որ այն չի համապատասխանում հիմնավորվածության, պատճառաբանվածության և որոշակիության պահանջներին:

Դատարանը 28.07.2025թ. որոշմամբ անդրադառնալով թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 01.03.2025 թվականի վճռով հաստատված հանգամանքներին, արձանագրել է հետևյալը.

Պաշտպանական որոշում կայացնելու անհրաժեշտության մասին հետևության Դատարանը հանգել է՝ հիմք ընդունելով «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ»՝ ՀՀ ՆԳՆ նստիկանության Կոտայքի բաժնի թվականի որոշումը: Այսինքն՝ Ա. Ա.-ի Մ.-ի կողմից նախկին կնոջ՝ Ա. Կ.-ի, նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառված լինելու մասին Դատարանի հետևությունները հիմնված են եղել բացառապես «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ»՝ ՀՀ ՆԳՆ նստիկանության Կոտայքի բաժնի 30.01.2025 թվականի որոշման վրա: Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ Պաշտպանական որոշում կայացնելու հիմքը վերացել է: Բացի այդ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1 գլխում առկա իրավական նորմերի մեկնաբանման արդյունքում կարող ենք արձանագրել նաև, որ Դատարանը պաշտպանական որոշում կայացնելիս սահմանափակված է առկա նյութերով և հնարավորություն չունի կողմերին լսելու արդյունքում ձևավորել ներքին համոզմունք, բացի այդ պաշտպանական որոշում

կայացնելու համար ժամանակի մեջ սահմանափակված լինելով՝ Դատարանը սույն դեպքում զրկված է եղել նաև թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործի առկայության պայմաններում սպասել վարչական դատարանի որոշմանը:

Դատարանը 28.07.2025թ. կայացված որաշմամբ արձանագրել է, որ «...Անդրադառնալով դիմումատուի մյուս փաստարկներին՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք թեև ուշադրության արժանի են, այնուամենայնիվ, քննարկման առարկա դարձվել չեն կարող, քանի որ պատասխանող կողմն ըստ էության առարկել է Դատարանի որոշման դեմ, այլ կերպ՝ ըստ էության քողարկված կերպով բողոքարկել է խնդրո առարկա որոշումը, ինչի հնարավորությունն օրենսդրությամբ ընձեռնված չէ:

Ամփոփելով՝ Դատարանը գտնում է, որ Պաշտպանական որոշումը պետք է վերացնել՝ դրա կայացման հիմքում դրված ակտն օրենքին հակասող ճանաչվելու հիմքով»:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ դատավորի դիրքորոշումը.

1. «Նաև» շաղկապի նշանակության մասով:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի և հիմնավորումների համակարգային վերլուծության արդյունքում հանգում են, որ կարգապահական վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ըստ վարույթ հարուցող մարմնի, Դատարանը պաշտպանական որոշումը վերացրել է մի հիմքով, որը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4 հոդվածի 6-րդ մասով նախատեսված չէ, ինչի արդյունքում պաշտպանական որոշումը վերացվել է նախատեսված ժամկետի ավարտից մեկ ամիս շուտ:

Նման պայմաններում արձանագրվել է, որ Դատավորի գործողություններում առկա են ՔԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասով 7-րդ հոդվածով, 234.4 հոդվածի 6-րդ մասով սահմանված դատավարական իրավունքի նորմերի խախտման հատկանիշներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4 հոդվածի 6-րդ մասի ենթադրյալ խախտման վերաբերյալ.

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կանոնակարգում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպաիրավական հիմքերը, սահմանում է ընտանիքում բռնության հասկացությունը, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց

վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով ընտանիքի անդամներ են՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեգավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձինք և հասարակական կազմակերպությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են՝

1) ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգության և պաշտպանության ապահովման առաջնայնության,

2) ընտանիքի՝ որպես հասարակության բնական և հիմնական բջջի աջակցության, ընտանիքում ավանդական արժեքների ամրապնդման և ընտանիքում համերաշխության վերականգնման,

3) երեխայի լավագույն շահերի առաջնահերթության,

4) իրավահավասարության ապահովման և խտրականության արգելքի,

5) արդարադատության մատչելիության,

6) մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների անձեռնմխելիության,

7) պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության սկզբունքներով:

Վերոգրյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը սահմանում է պաշտպանության բնագավառում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և հասարակական կազմակերպությունների կողմից ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման ընդհանուր սկզբունքները, դրանց

կանխարգելմանը և անձի պաշտպանությանն ուղղված գործիքակազմը, իսկ Դատարանի խնդիրն է պաշտպանական որոշման կիրառման միջոցով ընտանիքում բռնության նոր դրսևորումների կանխարգելումը:

Ընդ որում, Դատարանի գնահատմամբ պաշտպանական որոշմամբ սահմանափակումներ նախատեսելիս Դատարանը պետք է հիմք ընդունի ընտանիքում իրականացված բռնության տեսակը, դրա ծանրությունը, բռնության ենթարկված անձանց առողջությանը և անվտանգությանը շարունակաբար սպառնացած վտանգի առկայությունը, բռնության աճը և դրա հետևանքները:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներից է՝ պաշտպանական որոշումը:

ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն:

Դատարանի ընկալմամբ «նաև»-ը ցույց է տալիս, որ օրենսդիրը գիտակցաբար ընդլայնել է պաշտպանական որոշման վերացման հնարավորությունները, ստեղծել է բացառիկ, լրացուցիչ մեխանիզմ, և այն չի համարվում ընդհանուր կանոնի պարզ կիրառություն, այլ հատուկ կարգավորում է:

Դատարանի գնահատմամբ՝ հիշյալ նորմով չի սահմանափակվում պաշտպանական որոշումը վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու՝ շահագրգիռ անձի իրավունքը, եթե նշված անձը հիմնավորում է, որ առկա է պաշտպանական որոշումը վերացնելու այլ հիմք:

Դատավորի ընկալմամբ մեկնաբանվող նորմով «նաև»-ը նշանակում է, որ օրենսդիրը չի փակել պաշտպանական միջոցի վերացման հիմքերի ցանկը և այդ ցանկը ոչ սպառիչ է:

Այդ մոտեցումը Դատավորի մոտ ձևավորվել է ի շնորհիվ երեք հանգամանքի՝

Նախ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որը սահմանում է նորմատիվ իրավական ակտում որոշ շաղկապների և բառերի կիրառումը, որի 7-րդ մասի համաձայն՝

Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:

Ըստ 1976թ. Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» 1067-րդ էջում գետեղված նաև-ի բացատրության, այն նշանակում է «բացի ասվածից, նույնպես, նմանապես»:

Կարգապահական վարույթ հարուցելուց հետո Դատավորի կողմից ուսումնասիրվել են նաև այլ աղբյուրներ, օրինակ՝

Ըստ Ս. Մալխասյանցի 1944թ. Պետ. Հրատարակչությունում լույս տեսած «Հայերենի բացատրական բառարանի» 1572-րդ էջում, ըստ Ա. Կոանյանի 1998թ «Հայերեն լեզվի բառգիրք» բառարանի 326 էջում, ըստ Գ. Ճերեճեանի, Փ. Տոնիկյանի և Ա. Տեր-Իսաչատրյանի 1992թ «Հայոց լեզվի նոր բառարանի» 1651-րդ էջում գետեղված «նաև»-ի բացատրության նաև-ը ունի համանման բացատրություն՝ նմանապես, նույնպես, ևս, այլև, նշվածի կողքին:

Հատկանշական է, որ Դատարանի կայացրած որոշման մեջ կիրառված նորմում չի օգտագործվում «միայն», «բացառապես», «սույն դեպքում միայն» բառերը, որոնց պարագայում, Դատավորի ընկալմամբ, Դատարանը սահմանափակված կլիներ վերացնել իր որոշումը, միայն եթե չհիմնավորվեր, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն:

Այսինքն, նորմի նման ձևակերպման պայմաններում, Դատավորը գտել է, որ «Օրենսդիրը, օգտագործելով «նաև» շաղկապը, չի սահմանափակել պաշտպանական որոշման վերացման հիմքերի շրջանակը միայն 234.4 հոդվածի 6-րդ մասում բառացիորեն նշված դեպքով, այլ հնարավորություն է տվել դատարանին գնահատել նաև այլ հանգամանքներ, որոնք իրենց էությանը համարժեք են նշվածին և ուղղված են պաշտպանական որոշման իրականացման վերացմանը՝ պաշտպանական որոշումը վերադասության կարգով անբողոքարկելի լինելու պայմաններում հավասարակշռելով կողմերի իրավունքները:

Դատավորը նշել է, որ իր գնահատմամբ «նաև»-ը կարող է մեկնաբանվել որպես՝ «ոչ միայն նշվածը, այլ նաև այլ՝ չմատնանշված, բայց համարժեք դեպքեր»:

«Նաև» շաղկապի իրավական նշանակությունը մեկնաբանելիս, Դատավորը գտել է, որ օրենսդիրը նշված նորմում օգտագործել է «նաև» շաղկապը, որը իրավական տեխնիկայի տեսակետից ունի ավելացնող և չսահմանափակող նշանակություն:

28.07.2025թ. կայացված որոշմամբ Դատավորը գտել է, որ ՔԴՕ 234.4-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի համակարգային և նպատակային եղանակով, հաշվի առնելով դրա նպատակն ու գործառույթը՝ ապահովել պաշտպանական որոշման արդյունավետությունը և կանխել դրա չարաշահումը:

Դատավորի գնահատմամբ նորմի բովանդակությունից չի բխում, որ օրենսդիրը ցանկացել է ստեղծել պաշտպանական որոշման վերացման փակ ցուցակ:

Ընդհակառակը, «նաև» շաղկապի կիրառումը վկայում է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել դատարանին գնահատել նաև այլ այնպիսի հանգամանքներ, որոնք իրենց էությանը փաստացիորեն հանգեցնում են պաշտպանական որոշման իրավական նշանակության վերացմանը:

ՀՀ Արդարադատության նախարարի «Կոտայքի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» թիվ 24-Ա որոշման 17 էջում նշված է հետևյալը.

(...) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.04.2024 թվականի ՀՕ-171-Ն օրենքի ընդունմամբ օրենսդիրը հրաժարվեց հաշտության կառուցակարգի կիրառման հիմքով պաշտպանական որոշման վերացման հնարավորությունից, այն հիմնավորմամբ, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում հաշտեցման ընթացակարգի սահմանումը գործնականում խոչընդոտում է բռնության ենթարկված անձանց հասնելու արդյունավետ իրավական պաշտպանության եւ խախտված իրավունքի վերականգնման, հաշտեցման գործընթացը հակադրվում է ընտանեկան բռնության դեպքերի բարձր հանրային վտանգավորության, տուժողի բողոքից անկախ՝ քրեորեն հետապնդելի լինելու եւ համաչափ, արդարացի ներգործության միջոցներ պահանջելու սահմանված ուղենիշերի հետ, ինչի արդյունքում ՀՕ-171-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչվեց:

Օրենսդրական հիշյալ փոփոխության արդյունքում Գործով քննության ենթարկվող իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ առկա է հետևյալ նշումը. «(մասն ուժը կորցրել է 12.04.24 20-171-Ն):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է փաստել, որ օրենսդրի կողմից ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասում տեղ գտած «պաշտպանական որոշումը կարող է վերացվել «նաև» ձևակերպումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկինում՝ պաշտպանական որոշման վերացման ևս մեկ հիմք է նախատեսված եղել, որը սահմանող նորմը, սակայն, իր ուժը կորցրել է, որպիսի պայմաններում ներկա իրավակարգավորումների ուժով Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ պաշտպանական որոշման վերացման միայն մեկ հիմք է նախատեսում»:

Վերոգրյալի վերաբերյալ Դատավորը հայտնել է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4 հոդվածի 6-րդ մասը գործում է հետևյալ ձևակերպմամբ.

«6. Պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն»:

Հետևաբար նշված պարագայում կիրառման ենթակա նորմը իմ կողմից մեկնաբանվել է ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, հետևաբար, նման պայմաններում գտնում եմ, որ օրենսդիրը, եթե նշված նորմով ցանկանում էր դիտարկել միայն մեկ բացառություն, ապա զրկված չէ նշված հոդվածը ենթարկել փոփոխության և հոդվածից հանել «նաև» շաղկապը: Հաջորդիվ անդրադառնալով ՀՀ Արդարադատության նախարարի «Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» թիվ 24-Ա որոշմամբ արտահայտած այն դիրքորոշմանը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16 հոդվածի 7 մասը /«ինչպես նաև»/ կիրառելի չէ ՀՀ ՔԴՕ 234.4 հոդվածի 6-րդ մասի նկատմամբ, նկատի ունենալով, որ հոդվածում օգտագործված է «նաև» շաղկապը, ապա ցանկանում եմ հայտնել, որ ուսումնասիրելիս հայերենի վերը նշված բառարանները, պարզ է դառնում, որ «ինչպես նաև» բառակապակցության դիմաց նշված է «տես՝ նաև»:

2. Դատական պրակտիկայի մասով

ՀՀ Արդարադատության նախարարի «Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» թիվ 24-Ա որոշան մեջ նշված է հետևյալը.

«...Թիվ ԵԴ2/6039/02/24 քաղաքացիական գործի մասով վարույթ հարուցող մարմինն արձանագրել է, որ նշված գործի փաստական հանգամանքներն էականորեն տարբերվում են սույն գործի հանգամանքներից»:

Ցանկանում եմ հայտնել, որ իմ կողմից նշված քաղաքացիական գործով կայացված որոշումը մատնանշվել է, ոչ թե որպես նույնական գործ, այլ պայմանավորված այն հանգամանքով, որ Դատարանի կողմից պաշտպանական միջոցը վերացվել է ոչ թե 234.4 հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքով, այլ կրկին «նաև» շաղկապի տրամաբանությամբ: Թիվ ԵԴ2/7969/02/24 քաղաքացիական գործի մասով վարույթ հարուցող մարմինը նշել է հետևյալը. «...Ինչ վերաբերում է թիվ ԵԴ2/7969/02/24 քաղաքացիական գործին՝ հարկ է արձանագրել, որ անգամ եթե ընդունենք այն հանգամանքը, որ քննարկվող գործի շրջանակներում դատավորի

կողմից կայացված ակտի պատճառաբանական մասում առկա են որոշակի դատողություններ պաշտպանական որոշման վերացման հիմքերի բազմազանության վերաբերյալ, առնվազն ողջամիտ չէ մեկ դատական ակտում տեղ գտած դատողությունները որակել որպես ձևավորված դատական պրակտիկա»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշմանը անդրադառնալով՝ թիվ ՎԴ/2968/05/19 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2019 թվականի և թիվ ՎԴ/8716/05/19 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.05.2021 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը./ Տես՝ ՎԴ/2702/05/19, 2022թ./:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով: Սույն դեպքում, Դատարանը նկատի ունենալով, որ պաշտպանական միջոց կիրառելու մասին առաջին ատյանի դատարանների որոշումները բողոքարկման ենթակա չեն, հետևաբար, նման գործերով չի կարող առկա լինել ՀՀ Վճռաբեկ Դատարանի որոշումներ, նշված տրամաբանությամբ առաջնորդվելով առաջին ատյանի Դատարանի որոշումները նման գործերով համարել է որպես Դատական պրակտիկա և օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը կիրառել է միատեսակ: Նման պայմաններում կարող ենք արձանագրել, որ դատարանները, արդեն իսկ օրինական ուժ ստացած որոշումներով, գնահատական են տվել պաշտպանական որոշման վերացման հիմքերի բազմազանության վերաբերյալ:

Այսինքն, նման պայմաններում կարող ենք արձանագրել, որ ձևավորված պրակտիկայում քննարկվող նորմում «նաև» շաղկապը մեկնաբանվում է որպես՝ «ոչ միայն նշվածը, այլ նաև այլ՝ չմատնանշված, բայց համարժեք դեպքեր»:

3. Թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործով կայացված ակտը պաշտպանական միջոցի վերացման հիմքում դնելու մասով.

Ի թիվս այլի պաշտպանական որոշման գոյությունը և շարունակականությունը պայմանավորված են այն առաջնային վարչական ակտի իրավաչափությամբ և ուժով, որի վրա այն հիմնված է եղել: Գործով հաստատված է վարչական մարմնի կողմից նախկինում ընդունված այն որոշման վերացումը, որը հիմք է հանդիսացել պաշտպանական որոշման կայացման համար: Իմ ընկալմամբ Վարչական ակտի վերացումը հանգեցնում է նրան, որ վերանում են պաշտպանական որոշման կայացման հիմքում ընկած փաստական և իրավական հանգամանքները, պաշտպանական որոշումը զրկվում է իր իրավական հենարանից և պաշտպանական միջոցի պահպանումը դառնում է իրավական նպատակ չունեցող:

Դատարանը կայացված որոշմամբ գտել է, որ վարչական մարմնի այն որոշման վերացումը, որի վրա հիմնված է պաշտպանական որոշումը, իր իրավական հետևանքներով համարժեք է 234.4-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսված իրավիճակին, քանի որ՝

- պաշտպանական որոշումը փաստացի կորցնում է իր իրավական հիմքը,
- դրա շարունակական կիրառումը չի ծառայում պաշտպանական նպատակին,
- պաշտպանական որոշման պահպանումը հանգեցնում է իրավական

անհամաչափ միջամտության:

Համոզված եմ, որ 234.4-րդ հոդվածի նպատակը ոչ թե պաշտպանական որոշումների անվերապահ պահպանումն է, այլ դրանց իրավաչափ, հիմնավորված և արդյունավետ կիրառումը:

Այս իրավիճակում, գտնում եմ, որ վերացված է պաշտպանական որոշման կայացման հիմքում ընկած վարչական ակտը, հետևաբար պաշտպանական որոշման պահպանումը կհակասեր ինչպես նորմի նպատակին, այնպես էլ իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին: Կարծում եմ, որ Վարչական ակտի վերացման արդյունքում վերացել է պաշտպանական որոշման կայացման իրավական և փաստական հիմքը, ինչի պայմաններում վերջինիս պահպանումը հակասում է իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին: Գտնում եմ նաև, որ վարչական մարմնի որոշման վերացումը չի կարող դիտվել որպես իրավականորեն աննշան հանգամանք: Դատարանի հայեցողությունը սահմանափակված է օրենքով և նորմի նպատակով: Այլ, չմատնանշված դեպքերի գնահատումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրանք՝ ունեն նույն իրավական բնույթը, հանգեցնում են պաշտպանական որոշման նպատակների վերացմանը, ինչպես նաև հիմնավորված են ապացույցներով: Կարծում եմ, որ այս սահմաններում իրականացվող հայեցողությունը չի կարող համարվել կամայական:

Վարույթ հարուցող մարմինը նշել է հետևյալը «...հարկ է նախևառաջ արձանագրել, որ Վարչական դատարանի կողմից «անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշման» իրավաչափությունը գնահատվել է բացառապես որոշման իրավական հիմքերի համատեքստում, այն է՝ դատարանի կողմից

քննարկման առարկա է դարձվել վարչական մարմնի կողմից որոշման կայացման ընթացակարգին առաջադրվող պահանջների պահպանվածության հարցը՝ հատկապես բռնություն գործադրած անձի լսված լինելու իրավունքի ապահովվածության համատեքստում, որպիսի պայմաններում Վարչական դատարանը որևէ դիրքորոշում չի հայտնել որոշման փաստական հիմքի, այն է՝ բռնության փաստի առկայության բացակայության մասով:

Վերը նշվածի մասով ցանկանում եմ հայտնել, որ ՀՀ վարչական դատարանը մասնավորապես գտել է, որ «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» 30.01.2025 թվականի որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է, քանի որ այն չի համապատասխանում հիմնավորվածության, պատճառաբանվածության և որոշակիության պահանջներին:

Այսինքն, ՀՀ վարչական դատարանը ոչ միայն «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» 30.01.2025 թվականի որոշումը ոչ իրավաչափ ճանաչելիս հիմքում դրել է այն հանգամանքը, որ կայացված վարչական ակտով խախտվել է կողմի լսված լինելու իրավունքը, այլ նաև, որ կայացվ վարչական ակտը չի համապատասխանում հիմնավորվածության, պատճառաբանվածության և որոշակիության պահանջներին:

4. 28.07.2025 թվականի որոշմամբ Դատարանի 28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշումը 1 ամիս շուտ՝ վերացնելու մասով.

Ա. Կ.-ի հաղորդման մեջ (ըստ վարույթի հարուցման որոշման մեջբերումների) որևէ կերպ հիմնավորված չէ, թե դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ նյութական իրավունքի նորմի խախտումները ի՞նչ կերպ և ի՞նչ կոնկրետ մեխանիզմով է հանգեցրել՝ հաղորդում ներկայացրած անձի որևէ սուբյեկտիվ իրավունքի խախտման: Մասնավորապես, հաղորդման մեջ բացակայում է կոնկրետ իրավունքի նշումը, որը ենթադրաբար խախտվել է, այդ իրավունքի խախտման փաստական նկարագրությունը, ինչպես նաև պատճառահետևանքային կապի հիմնավորումը դատարանի գործողության և իրավական հետևանքի միջև:

Իրավական պատասխանատվության կամ դատական ակտի անօրինականության հարց բարձրացնելը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ապացուցվում է ոչ միայն նորմի խախտման փաստը, այլև դրա արդյունքում կոնկրետ իրավունքի խախտումը, ինչը տվյալ դեպքում բացակայում է: Եվ հարկ եմ համարում անդրադառնա, նաև «մեկ ամիս շուտ» ձևակերպմանը:

Վարույթ հարուցող մարմինը հայտնել է հետևյալը. «...2.7 Լրացուցիչ նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Դատարանի կողմից պաշտպանական որոշումը սահմանված ժամկետի ավարտից շուտ վերացնելուց հետո Հաղորդում ներկայացրած անձը մի շարք հաղորդումներ, դիմում բողոքներ է ներկայացրել պետական տարբեր գերատեսչություններ, այդ թվում՝ Ներքին գործերի

նախարարություն և Դատախազություն, որով հայտնել է, որ իր և իր անչափահաս երեխայի նկատմամբ Ա. Մ.-ի կողմից շարունակվում են հետապնդումները, ֆիզիկական և հոգեբանական բռնությունը, սպառնալիքները, Հաղորդում ներկայացրած անձի մասին չհամապատասխանող զրպարտչական տեղեկատվությունների տարածումը, ընդ որում՝ պաշտպանական որոշման վերացումից հետո առավել ինտենսիվ, ինչի առնչությամբ առկա է նաև նախաձեռնված քրեական վարույթ»:

Վերոգրյալի վերաբերյալ ցանկանում եմ հայտնել հետևյալը.

- Հաղորդում ներկայացրած անձի կողմից մի շարք հաղորդումներ, դիմում բողոքներ պետական տարբեր գերատեսչություններ ներկայացնելու հանգամանքը, ինքնին չի կարող դիտարկվել և կապվել որպես հետևանք՝ դատարանի կողմից մեկ ամիս շուտ պաշտպանական միջոցի վերացման հետ, նկատի ունենալով, որ թիվ ԿԴ/0253/02/25 քաղաքացիական գործի նյութերում, այսինքն՝ մինչև պաշտպանական միջոցի կիրառումը ևս հաղորդում ներկայացրած անձը մի շարք բողոքներ և դիմումներ է ուղարկել պետական տարբեր մարմիններին: Սակայն հատկանշական է, որ տարբեր մարմիններին ուղղված բողոքների արդյունքները բացակայում են:

- Սույն որոշմանը կից դատարան է ներկայացվել նաև էլեկտրոնային կրիչ, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաղորդում ներկայացրած անձը, ի պատասխան ՀՀ Արդարադատության նախարարի 05.02.2026թ. թիվ Ե-7/2026 գրության ներկայացրել է լրացուցիչ նյութեր:

Նշված «լրացուցիչ նյութերի» ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներկայացված նյութերից միայն մեկն է կապված պաշտպանական միջոցի վերացմանը հաջորդող մեկամսյա ժամանակահատվածի հետ: Այսինքն, ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ 28.07.2025 թվականից /պաշտպանական միջոցի վերացման օր/ մինչև 28.08.2025 թվականն /չվերացման պարագայում կիրառված պաշտպանական միջոցի ժամկետի ավարտ/ ըստ հաղորդում ներկայացրած անձի միայն մեկ դեպք է գրանցվել 29.07.2025թ., երբ երեխայի հայրը մանկապարտեզ է գնացել երեխայի հետ տեսակցություն իրականացնելու համար:

Հատկանշական է, որ նշված տեսակցությունները սահմանվել են Դատարանի որոշմամբ /թիվ ԵԴ/45307/02/22 գործով/:

Այսինքն, անկախ Դատարանի կողմից պաշտպանական միջոցի վերացման կամ չվերացման հանգամանքից, միևնույն է, առկա է դատական ակտ, որի հիման վրա 29.07.2025թ. երեխայի հայրը գնացել է մանկապարտեզ՝ երեխայի հետ տեսակցելու:

Ըստ նշված «լրացուցիչ նյութերի» հաղորդում ներկայացրած անձը հայտնել է, որ 29.07.2025թ. տեսակցության հետ կապված ուստիկանները և հոգեբանները աշխատել են երեխայի հետ, սակայն խեղաթյուրել են երեխայի ասածը և քրեական գործ չի հարուցվել, որի մասով կրկին ինքը ներկայացրել է բողոք: Ձեր ուշադրությունն եմ հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ ներկայացված լրացուցիչ նյութերով

հաղորդում ներկայացրած անձը հայտնել է հետևյալը. «Բոլոր Դատարաններում Ա. Մ.-ը հայտնում է, որ ինքը բռնարար չէ, և որոշումը վերացվել է»:

Այսինքն, ըստ հաղորդում ներկայացրած անձի իր վերաբերյալ քննվող բոլոր գործերով դատարանն առաջնորդվում են միայն Ա. Մ.-ի խոսքով, սակայն նման հայտարարությամբ և թյուրընկալմամբ վարկաբեկվում է Դատարանների գործունեությունն ու համբավը և հաղորդում ներկայացրած անձի պահանջների չբավարարումը վերջինս դիտարկում է որպես բոլոր դատարանների և պետական մարմինների կողմից սխալ աշխատելաճ: Այնինչ, ծանոթ չլինելով հանդերձ հաղորդումն ներկայացրած անձի կողմից նշված որոշումներին, հատկանշական են համարում ընդգծել, որ դատարաններն անկախ են, գործը կամ հարցը քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ, ինչպես նաև որոշում կայացնելիս գնահատում են գործում եղած բոլոր ապացույցները, որոշում են փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, այլ ոչ թե միայն կողմերից մեկի խոսքով:

Այնուամենայնիվ, անդրադառնալով ներկայացված «լրացուցիչ ապացույցներին» ձեր ուշադրությունն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ էլեկտրոնային կրիչում առկա տվյալներից 1, 2, 4, 5, 6, 7 կետերում ներկայացված ապացույցները վերաբերվում են սույն կարգապահական վարույթի հարուցմանը: 3-րդ կետում առկա տեսաձայնագրությունում բացակայում է թվագրումը, որից կարող էինք եզրակացնել, թե նշված տեսակցությունը եղել է պաշտպանական միջոցի վերացումից առաջ թե հետո, կամ որքան ժամանակ հետո, այն է մեկ ամիս շուտ վերացման ընթացքում, թե ավելի ուշ: Բացի այդ, նշված ձայնագրությունը վերաբերվում է երեխայի հետ տեսակցության իրականացմանը, որը սահմանվել է Դատարանի որոշմամբ: Նշված տեսագրությունից պարզ է դառնում, որ տեսակցությանը մասնակցել են նաև հարկադիր կատարողները: Նշվածի համատեքստում գտնում են, որ նշված տեսաձայնագրությունը չի կարող հիմք հանդիսանալ ինձ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, որովհետև նշվածից պարզ չէ, թե երբ է այն տեղի ունեցել: Իսկ եթե այն վերաբերվում է 29.07.2025թ. տեսակցությանը, ապա նշված տեսակցությունը սահմանված է Դատարանի որոշմամբ թիվ ԵԴ/45307/02/22 գործի շրջանակներում:

Կից ներկայացված էլեկտրոնային կրիչի 9, 10, 11 կետերում առկա տեսաձայնագրությունների ուսումնասիրության արդյունքում ևս գտնում են, որ որևէ ապացուցողական նշանակություն չունեն, նկատի ունենալով, որ դրանց թվագրումը ևս բացակայում է, սակայն տեսաձայնագրությունների անվանումից կարող ենք եզրակացնել, որ ենթադրաբար դրանք կատարվել են մինչև 28.07.2025թ.՝ այն է մինչև պաշտպանական միջոցի վերացումը:

Կից ներկայացված էլեկտրոնային կրիչի 12 կետում առկա ձայնագրությունից ոչինչ պարզ չէ: Պարզ չէ թե երբ է ձայնագրվել, ում միջև է խոսակցությունը, որտեղ և ինչ պայմաններում:

Կից ներկայացված էլեկտրոնային կրիչի 13, 14, 15, 16, 17, 18 և 19 կետերում նշված ապացույցները ևս չեն վերաբերվում 28.07.2025-28.08.2025թթ.-ին, հետևաբար կրկին սույն կարգապահական վարույթին վերաբերելի չեն:

Այսինքն, «լրացուցիչ նյութեր» անվան տակ հաղորդում ներկայացրած անձը լիազոր մարմնին է ներկայացրել իր կողմից պետական մարմիններ ուղղված բազմաբնույթ և բազմաթիվ բողոքներ և դիմումներ, միաժամանակ, այդ բոլորի արդյունքում բոլոր պետական մարմինների աշխատանքը գնահատելով խուսափողական, անօրինական և կողմնակալ:

Հարգելի խորհուրդ, ներքին համոզմունք ձևավորելու համար Ձեր ուշադրություն եմ հրավիրում նաև թիվ ԵԴ/45307/02/22 գործի վերաբերյալ Datalex.am կայքում առկա տվյալներին, որոնց համաձայն Դատարանը 04.03.2026թ. որոշմամբ որոշել է «1. Միջնորդությունը բավարարել մասնակի՝ Դատարանի 05.12.2022թ. որոշմամբ կիրառված և 15.02.2023թ., 21.03.2023թ., 31.07.2023թ. և 02.11.2023թ. որոշումներով ձևափոխված հայցի ապահովման միջոցը ձևափոխել հետևյալ կերպ.

1.1. արգելել Ա. Ա.-ի Կ.-ին առանց Ա. Ա.-ի Մ.-ի գրավոր համաձայնության անչափահաս Մ. Ա.-ի Մ.-ին ՀՀ տարածքից դուրս տանել,

1.2. պարտավորեցնել Ա. Կ.-ին՝ չխոչընդոտելու Ա. Մ.-ի և Մ. Մ.-ի շփմանը տեսահաղորդակցության և ձայնահաղորդակցության կապի միջոցներով, յուրաքանչյուր օր, երեկոյան 18:00-ից մինչև երեխայի քնելու ժամանակահատվածում:

1.3. պարտավորեցնել Ա. Ա.-ի Կ.-ին՝ Մ. Ա.-ի Մ.-ի առողջության ապահովման, կրթության և զարգացման վերաբերյալ բոլոր հարցերի մասին տեղեկացնել Ա. Ա.-ի Մ.-ին:

2. Դատարանի 02.11.2023թ. որոշմամբ սահմանված տեսակցության կարգը պահպանել նույնությամբ, դրան անդրադառնալ ՀՀ ԱՆ ՀԿԱԾ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների հատուկ բաժնի հարկադիր կատարողի 26.01.2026թ. որոշմամբ նշանակված փորձաքննության եզրակացությունը ներկայացվելու դեպքում»:

Այսինքն նշված որոշմամբ, Դատարանը բացի արդեն իսկ Դատարանի 02.11.2023թ. որոշմամբ սահմանված տեսակցության կարգից, երեխայի լավագույն շահ է համարել նաև Ա. Մ.-ի և Մ. Մ.-ի շփումը տեսահաղորդակցության և ձայնահաղորդակցության կապի միջոցներով, յուրաքանչյուր օր, երեկոյան 18:00-ից մինչև երեխայի քնելու ժամանակահատվածում, ինչպես նաև Մ. Ա.-ի Մ.-ի առողջության ապահովման, կրթության և զարգացման վերաբերյալ բոլոր հարցերի մասին Ա. Ա.-ի Մ.-ին տեղեկացնելը: Նշվածի համատեքստում կարող ենք արձանագրել, որ անկախ պաշտպանական միջոցի կիրառումից կամ վերացումից Դատարանը, քննելով հոր և անչափահաս երեխայի տեսակցության հարց, երեխայի

լավագույն շահ է համարում երեխայի և հոր շփումը և տեսակցությունը /հայցի ապահովման շրջանակում/, որը ևս մի անգամ Դատարանի համար ստեղծում է ներքին համոզմունք՝ պաշտպանական միջոցի վերացման օրինաչափության մասով: Վերոգրյալի հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ վարույթի հարուցման որոշման մեջ չի պարզաբանվում, թե «մեկ ամիս շուտ» պաշտպանական միջոցի վերացման ժամանակային հանգամանքը ի՞նչ իրավական նշանակություն ունի, ի՞նչ իրավունքի իրացմանն է խոչընդոտել, կամ ի՞նչ բացասական հետևանք է առաջացրել հաղորդում ներկայացրած անձի համար:

Իրականում հաղորդման բովանդակությունից չի հետևում, որ պաշտպանական որոշման մեկ ամիս շուտ վերացումը առաջացրել է որևէ իրավական կամ փաստական բացասական հետևանք, այդ թվում՝ բռնության նոր դրսևորում, վտանգի առաջացում կամ անձի իրավունքների սահմանափակում: Ինչ վերաբերվում է հաղորդում ներկայացրած անձի կողմից ներկայացված «Լրացուցիչ նյութերին», ապա դրանք որևէ ապացուցողական նշանակություն չունեն և չեն կարող հիմք հանդիսանալ իմ կողմից կատարված դատավարական գործողությունները կարգապահական խախտում գնահատելու համար, վերը վկայակոչված պատճառաբանություններով: Ավելին, դրանք նույնիսկ պատշաճ ապացույցներ չեն և վերաբերելի չեն սույն կարգապահական վարույթին, որովհետև նշված գրեթե բոլոր նյութերը ստեղծվել են կիրառված պաշտպանական միջոցի վերացման ժամկետի ավարտից՝ 28.08.2025թ.-ից հետո, ինչը վկայում է, որ պաշտպանական որոշման վաղաժամ վերացումը (մեկ ամիս շուտ) չի առաջացրել բացասական հետևանք և չի հանգեցրել նոր վտանգի կամ բռնության իրականացման: Բացի այդ, ցանկանում եմ ընդգծել նաև, որ պաշտպանական որոշումը հանդիսանում է կանխարգելիչ և ժամանակավոր միջոց, որի նպատակը հնարավոր վտանգի չեզոքացումն է, այլ ոչ թե անձի մեղավորության հաստատումը: Դատարանը պաշտպանական որոշում կայացնելիս առաջնորդվում է ոչ թե անցյալում կատարված բռնության փաստի պարտադիր ապացուցմամբ, այլ հնարավոր վտանգի առկայությամբ: Հետևաբար, նույն տրամաբանությամբ, վտանգի բացակայության կամ վերացման դեպքում դատարանն իրավասու է վերանայել կիրառված միջոցի նպատակահարմարությունը: Ինչ է ստացվում, սույն գործով պաշտպանական որոշման հիմքում ընկած է եղել ոստիկանության վարչական ակտը, որը հետագայում վերացվել է վարչական դատարանի կողմից: Այս հանգամանքը նշանակում է, որ վերացել է այն իրավական հիմքը, որի վրա հիմնվել էր դատարանը վտանգի նախնական գնահատումը կատարելիս: Ինչպես նաև Դատարանը, վերացնելով պաշտպանական որոշումը, չի սահմանափակվել միայն վարչական ակտի վերացմամբ, այլ փաստացի վերահաստատել է, որ վտանգի իրավական և փաստական հիմնավորումը այլևս բացակայում է:

Նման պայմաններում գտնում են, որ իմ գործողություններում առկա չեն ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դատավարական իրավունքի նորմի խախտման հատկանիշներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 1-ին մասի և 7-րդ հոդվածի ենթադրյալ խախտման վերաբերյալ Դատավորը հայտնել է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը պետք է լինի օրինական:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ակտն օրինական է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս:

Վերը նշված /ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4 հոդվածի 6-րդ մասի մեկնաբանման/ պատճառաբանություններով գտնում են, որ կայացված դատական ակտն օրինական է, այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

«Հայաստանի հանրապետության դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն գլխի իմաստով՝ ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրկում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրկում է դատական իշխանությանը»: Ձեր ուշադրությունն են հրավիրում նաև այն հանգամանքին, որ ըստ ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական

օրենքի 142 հոդվածի 9-րդ կետի «Արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության»:

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Նշված նորմի իմաստով կոպիտ անփութություն առկա է, երբ դատավորը չի գիտակցել վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել: Սակայն տվյալ դեպքում արարքի ոչ իրավաչափությունը չի հիմնավորվում, քանի որ նորմի տեքստը բացարձակապես միարժեք չէ, առկա է համակարգային մեկնաբանության անհրաժեշտություն, Դատարանը տվել է պատճառաբանություն, անդրադարձել է կոնկրետ դատական ակտի ազդեցությանը, փորձել է գնահատել փաստական և իրավական հենքի վերացումը: Այս պայմաններում նույնիսկ ենթադրյալ սխալ մեկնաբանությունը չի կարող ինքնաբերաբար նույնացվել կոպիտ անփութության հետ: Կոպիտ անփութություն ենթադրելու համար պետք է ցույց տրվեր, որ դատավորը անտեսել է ակնհայտ, անվիճելի և ուղղակի կիրառելի արգելքը: Այդպիսի վիճակ այստեղ առկա չէ:

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 149 հոդվածի 2-րդ կետի համաձայն «2. Դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ»: Վերը նշված մանրամասն բացատրություններով, պատճառաբանություններով և իրավական վերլուծություններով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4 հոդվածի 6-րդ մասի մեկնաբանման արդյունքում հուսով եմ, որ Դուք կհամաձայնվեք իմ պատճառաբանությունների հետ և կարձանագրեք, որ իմ կողմից որևէ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում առկա չէ, այլ դա միայն քննարկվող իրավական նորմում «նաև» շաղկապի առկայության պայմաններում և պաշտպանական որոշման վերացման հիմքերի ցանկի սպառիչ չլինելով պայմանավորված թյուրընկալման, գնահատման և մեկնաբանման խնդիր է:»:

Դատավորը խնդրել է Խորհրդին մերժել ՀՀ Արդարադատության նախարարի 16.03.2026թ. «Կոտայքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն

դատական խորհրդին դիմելու մասին» թիվ 24-Ա որոշմամբ ներկայացված միջնորդությունը:

4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

4.1 Դատարանի 28.02.2025 թվականի թիվ ԿԴ/0253/02/25 (այսուհետ նաև՝ Գործ) որոշմամբ Ա. Կ.-ի հայցն ընդդեմ Ա. Մ.-ի՝ բավարարվել է մասնակի և 6 ամիս ժամկետով կիրառվել են պաշտպանական համապատասխան միջոցներ:

4.2 Դատարանի 28.07.2025 թվականի որոշմամբ Ա. Մ.-ի դիմումը բավարարվել է՝ վերացվել է Դատարանի 28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշումը: Որոշման պատճառաբանական մասի համաձայն՝ «(...) ՀՀ վարչական դատարանը, դռնբաց դատական նիստում քննելով թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործն ըստ հայցի Ա.Մ-ի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, Երրորդ անձ՝ Ա. Կ-ի՝ 30.01.2025 թվականի «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումը, որպես հետևանք՝ 07.02.2025 թվականի որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին, վճռել է. «1. Ա. Մ-ի հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի բաժնի 30.01.2025 թվականի «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշումը և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ՀՈԳ վարչության ՄՄԱՎ ԸԲԿ աշխատանքների գծով մեթոդական բաժնի ՀԿՀ ավագ տեսուչի 07.02.2025 թվականի որոշումը...»: (...) անդրադառնալով թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 01.03.2025 թվականի վճռով հաստատված հանգամանքներին, Դատարանն արձանագրում է հետևյալը. Պաշտպանական որոշում կայացնելու անհրաժեշտության մասին հետևության Դատարանը հանգել է՝ հիմք ընդունելով «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ»՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի թվականի որոշման պատճենը: Այսինքն՝ Ա. Մ.-ի կողմից նախկին կնոջ՝ Ա. Կ-ի, նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառված լինելու մասին Դատարանի հետևությունները հիմնված են եղել բացառապես «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ»՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի 30.01.2025 թվականի որոշման վրա: Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ Պաշտպանական որոշում կայացնելու հիմքը վերացել է: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի

գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն (ընդգծումը Դատարանին է): Բերված նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների՝ իրենց տառացի նշանակությամբ մեկնաբանման արդյունքում Դատարանն արձանագրում է, որ պաշտպանական որոշումը վերացնելու հիմքերն սպառիչ չեն, և որ դրանց մեջ ներառված է նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումը՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի՝ դիտավորությամբ պարբերաբար որոշակի գործողություններ կատարված լինելու հիմքով: Դատարանի գնահատմամբ՝ հիշյալ նորմով չի սահմանափակվում պաշտպանական որոշումը վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու՝ շահագրգիռ անձի իրավունքը, եթե նշված անձը հիմնավորում է, որ առկա է պաշտպանական որոշումը վերացնելու այլ հիմք: (...):

4.3 Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2025 թվականի որոշմամբ Դատարանի 28.07.2025 թվականի «Պաշտպանական որոշումը վերացնելու մասին» որոշման դեմ Ա. Կ.-ի կողմից բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է այն հիմնավորմամբ, որ պաշտպանական որոշումը վերացնելու բողոքարկման իրավական մեխանիզմներ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չեն, այսինքն՝ առկա է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու օրենսդրական արգելք:

5. Հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող իրավական հարցադրումները

Հաշվի առնելով Արդարադատության նախարարի կողմից միջնորդությունում բերված փաստարկներն ու հիմնավորումները և դրանց դեմ Դատավորի կողմից ներկայացված բացատրությունը՝ Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

5.1. արդյո՞ք Դատավորի կողմից թույլ է/են տրվել դատավարական իրավունքի նորմի /նորմերի/ խախտում /խախտումներ/,

5.2. արդյո՞ք Դատավորի կողմից ենթադրյալ դատավարական իրավունքի նորմի /նորմերի/ խախտումը /խախտումները/ թույլ է/են տրվել դիտավորությամբ, թե կոպիտ անփութությամբ:

6. Խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Լիազոր մարմնի ներկայացուցիչների և Դատավորի դիրքորոշումները, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը՝ Խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան, իսկ 4-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով:

Սահմանադրության 175-րդ և Օրենսգրքի 89-րդ հոդվածներով սահմանվում են Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները, որոնք ամբողջությամբ ուղղված են դատական իշխանության կազմակերպմանը և բնականոն գործունեության ապահովմանը:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի, դատարանի և դատական իշխանության անկախության վերաբերյալ իրավական կարգավորումներն ամրագրված են ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով, ընդ որում դատավորի անկախության վերաբերյալ իրավական կարգավորումների ընդհանուր իրավական բովանդակության էությունը կայանում է նրանում, որ դատավորի անկախությունը հանդիսանում է ոչ միայն նրա իրավունքը, այլ հասարակության՝ օրինական և հիմնավորված արդարադատության իրականացման ապահովման երաշխիքը:

Խորհուրդը հարկ է համարում նշել, որ դատավորի անկախության երաշխիքներն ապահովող գործիքակազմում կարևոր տեղ է զբաղեցնում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը:

Օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Խորհուրդն իր սահմանադրական առաքելության հաշվառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը պետք է իրականացնի այնպես, որպեսզի չվտանգի դատավորի և դատարանի անկախության սահմանադրական պահանջը, ինչպես նաև ապահովի դատավորի կողմից բացառապես իր լիազորությունների շրջանակներում գործելու օրենսդրական պահանջը՝ միաժամանակ երաշխավորելով դատավորի անձեռնմխելիությունը

կարգապահական պատասխանատվությունից՝ դատարանի օրենքով վերապահված լիազորությունները բարեխղճորեն կատարելու դեպքում:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ. (...):

Խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Նախարարի միջնորդության հիման վրա Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննության է առնում Օրենսգրքի 152-րդ հոդվածում ամրագրված դրույթի պահանջներին համապատասխան, այն է՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում»: Այդ կապակցությամբ Խորհրդի իրավական հետազոտման առարկան սահմանափակվում է միջնորդությամբ ներկայացված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթը հարուցած մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման համար դատավորը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ Խորհրդի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ: Դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին:

Վերը նշված հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ տվյալ դեպքում վարույթ հարուցող մարմինն է կրում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունն ապացուցելու պարտականությունը: Վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ձեռք բերվեն ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ բավարար կլինեն Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և վերջինիս մեղքը հաստատելու համար: Այսինքն, գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում վարույթ հարուցող մարմինը պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի՝ «Ընտանիքի պաշտպանությունը» վերտառությամբ 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Նշված դրույթից հետևում է, որ պետությունն ունի պետության պոզիտիվ պարտավորություններ՝ ուղղված ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանության իրականացմանը:

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և այդպիսի բռնության ենթարկված անձանց պաշտպանության իրավական կառուցակարգ, որի հիմնական տարրերն են պաշտպանության միջոցները: Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝

- 1) նախազգուշացումը.
- 2) անհետաձգելի միջամտության որոշումը.
- 3) պաշտպանական որոշումը:

Վերջիններիս նման հերթականությամբ սահմանումը պայմանավորված է դրանց իրավասահմանափակիչ գործառույթի սահմաններով: Այս իմաստով, պաշտպանական որոշումը դատական կարգով կայացվող և երկարաժամկետ իրավական ազդեցություն ունեցող պաշտպանության միջոց է: Այն կիրառվում է ինչպես առկա վտանգը վերացնելու, այնպես էլ ընտանեկան և կենցաղային բռնության նոր դրսևորումները կանխարգելելու, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի երկարաժամկետ պաշտպանությունն ապահովելու նպատակով: Դիցուք, Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կայացվում է 4-12 ամիս ժամկետով, և այն կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամիս ժամկետով:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշման դիմումին ներկայացվող պահանջները, դրանք քննելու կարգը, դատարանի կողմից ընդունվող ակտերը, դրանք բողոքարկելու կարգը և պաշտպանական որոշման դադարման հիմքերը նախատեսվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Այսինքն, տվյալ օրենքով նշված համապատասխան իրավակարգավորումների ապահովմանն ուղղված դատավարական ընթացակարգերը վերապահվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին (այսուհետ՝ ՔԴՕ):

ՔԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը պետք է լինի օրինական:

ՔԴՕ 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտն օրինական է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը պետք է լինի օրինական, իսկ դատական ակտն օրինական է, եթե այն կայացվել է Սահմանադրության, սահմանադրական օրենքների, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս և լուծելիս, հետևաբար, որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

ՔԴՕ 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:

ՔԴՕ 202-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ դատարանը հատուկ հայցային վարույթի կարգով քննում է (...) 7) «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը:

ՔԴՕ 234.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումը ներկայացվում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ հայցադիմում ներկայացնող աջակցության կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

ՔԴՕ 234.3-րդ հոդվածի 4-րդ համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Խորհուրդն արձանագրում է, որ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ պաշտպանական որոշման վերացման համար նախատեսված է միայն մեկ հիմք՝ այն դեպքում, երբ ապացուցվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար ձեռնարկում է այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն: Այսինքն՝ օրենսդիրը սպառիչ կերպով սահմանել է պաշտպանական որոշման վերացման հիմքը, իսկ դրա ձևակերպումը բավարար հստակ և որոշակի է՝ բացառելով լայն մեկնաբանության կամ օրենքով չնախատեսված այլ հիմքերի կիրառման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է Դատավորի այն դիրքորոշմանը, թե ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասում օգտագործված «նաև» բառը հիմք է տալիս պաշտպանական որոշման վերացման հիմքերը մեկնաբանել ընդլայնողական եղանակով, ապա Խորհուրդը գտնում է, որ նման մոտեցումը չի բխում ո՛չ նորմի բովանդակությունից, ո՛չ դրա

նպատակային նշանակությունից, և ո՛չ էլ իրավակարգավորման համակարգային տրամաբանությունից:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «նաև» բառը նշված դրույթում չի կարող փոխարինել օրենքով նախատեսված տվյալ միակ իրավական հիմքին կամ ինքնին ստեղծել պաշտպանական որոշման վերացման այլ, օրենքով ուղղակիորեն չնախատեսված հիմքերի շրջանակ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ բացի արդեն իսկ սահմանված միակ հիմքից, ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասը որևէ ողջամիտ տրամաբանությամբ և մեկնաբանության որևէ կանոնի կիրառմամբ չէր կարող ընկալվել և կիրառվել որպես պաշտպանական որոշման վերացման համար այլ հիմք նախատեսող իրավական հնարավորություն:

Սույն կարգապահական վարույթի նյութերից հետևում է, որ Դատարանը, քննության առնելով Ա.Կ.-ի ընդդեմ Ա.Մ.-ի հայցը, 28.02.2025 թվականին կայացրել է «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշում, բավարարել է այն և 6 ամիս ժամկետով կիրառել է պաշտպանական միջոցներ, իսկ 28.07.2025 թվականի որոշմամբ «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշմամբ սահմանված 6-ամսյա ժամկետի ավարտից մեկ ամիս շուտ կայացրել է տվյալ որոշումը վերացնելու մասին որոշում՝ որպես վերացման հիմք վկայակոչելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ» որոշման թիվ ՎԴ/1535/05/25 վարչական գործով Վարչական դատարանի 01.03.2025 թվականի վճռով անվավեր ճանաչված լինելու հանգամանքը:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ պաշտպանական որոշման վերացման կոնկրետ հիմքը որևէ կերպ չի վերաբերում պատասխանողի նկատմամբ ընդունված անհետաձգելի միջամտության որոշմանը: Ավելին, ՔԴՕ 234.2-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առկայության դեպքում պաշտպանական որոշման կայացման վերաբերյալ հայցադիմումին կցվում են «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքին համապատասխան՝ պատասխանողի նկատմամբ ընդունված նախազգուշացման և (կամ) անհետաձգելի միջամտության որոշումները: Նշվածից հետևում է, որ պատասխանողի նկատմամբ ընդունված նախազգուշացման և (կամ) անհետաձգելի միջամտության որոշումները պարտադիր կամ կանխորոշող նշանակություն չունեն պաշտպանական որոշման կայացման հարցում: Հետևաբար նշված վարչական ակտի կամ դրա հիմքում ընկած վարչական վարույթի հետագա իրավական ճակատագիրը ինքնին չի կարող ստեղծել պաշտպանական որոշման վերացման նոր՝ ՔԴՕ-ով չնախատեսված հիմք:

Սույն կարգապահական վարույթով հաստատված փաստերի և վերաբերելի իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորը 28.02.2025 թվականի «Պաշտպանական որոշում կայացնելու մասին» որոշումը սահմանված 6-ամսյա ժամկետի ավարտից մեկ ամիս շուտ՝ 28.07.2025 թվականին ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասով չնախատեսված հիմքով վերացնելու արդյունքում թույլ է տվել ՔԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի և 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի խախտումներ:

Անդրադառնալով մեղքի ձևին՝ Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վերը նշված իրավանորմերի տրամաբանությունից բխում է, որ օրենսդրի կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման վարքագծի առումով առանձնացվել են մեղքի դրսևորման երկու ձևեր՝ դիտավորություն և կոպիտ անփութություն:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության տեսանկյունից մեղքը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի նկատմամբ:

Խորհուրդը փաստում է, որ Դատավորն իրեն վերագրվող խախտումը կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև ստորև ներկայացվող հիմնավորումներով ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել: Նախ՝ կիրառման ենթակա իրավական նորմը՝ ՔԴՕ 234.4-րդ հոդվածի 6-րդ մասը, բավարար չափով հստակ և կանխատեսելի է, քանի որ պաշտպանական որոշման վերացման միակ հիմքը ձևակերպվել է սպառիչ կերպով՝ կոնկրետ սուբյեկտի դիմումի և ապացուցման առարկայի կապակցությամբ, ինչը Դատավորի համար չէր կարող ողջամիտ մեկնաբանման կասկած հարուցել: Երկրորդ՝ Դատավորը, պաշտպանական որոշումը վերացնելով օրենքով չնախատեսված հիմքով, փաստացի ստեղծել է վերացման նոր հիմք՝ ընդլայնելով նորմի դատավարական գործողության շրջանակը և ձևավորելով օրենքում բացակայող իրավակարգավորում, ինչը դուրս է դատարանի՝ իրավակիրառ լիազորությունների սահմաններից: Երրորդ՝ հաշվի առնելով իր մասնագիտական կարգավիճակը, կիրառվող նորմի հստակ կառուցվածքը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածով սահմանված մեկնաբանման կանոնը, Դատավորը գիտեր կամ առնվազն պարտավոր էր իմանալ,

որ օրենքով չնախատեսված հիմքով պաշտպանական որոշման վերացումն անթույլատրելի է:

Կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ (Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մաս):

Խորհրդի գնահատմամբ խախտման ծանրությունը պայմանավորված է նրանով, որ այն կատարվել է ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ վեճի շրջանակներում, որն իր բնույթով առանձնանում է հանրային բարձր զգայունությամբ և ենթադրում է օրենքով նախատեսված պաշտպանական միջոցների նկատմամբ առավել խիստ և զգուշավոր վերաբերմունք և դատավորից պահանջվում է առավել բարձր մասնագիտական զգուշավորություն՝ հաշվի առնելով կիրառվող պաշտպանական միջոցների նպատակը և դրանց հասարակական նշանակությունը:

Այս համատեքստում Խորհուրդը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի գործով՝ արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում ընտանեկան բռնության բազմաթիվ վարույթներ ընդգրկող գործում՝ ընդգծելով դատական համակարգում համագործակցության կարևորությունը և բռնության ամբողջ նախապատմությունը որպես մեկ ամբողջություն դիտարկելու անհրաժեշտությունը: Սույն չափանիշը ևս վկայում է, որ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատավորից պահանջվում է բարձր աստիճանի մասնագիտական զգուշավորություն և առանձնահատուկ ջանասիրություն: Նման գործերով կիրառվող պաշտպանական որոշումները կոչված են ապահովելու բռնության ենթարկված անձի կյանքի, ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության, ինչպես նաև անձնական և ընտանեկան կյանքի անհապաղ պաշտպանությունը: Հետևաբար, դրանց վերացումը օրենքով չնախատեսված հիմքով վտանգում է օրենքով նախատեսված պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը և կարող է բացասաբար անդրադառնալ այն արժեքների պաշտպանության վրա, որոնց ապահովման համար այդ միջոցները սահմանվել են:

Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորը կարգապահական խախտում թույլ տալու պահին կարգապահական տույժ չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Խորհուրդը,

¹ <https://arlis.am/hy/acts/130158>:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեխակ Գևորգյանին հայտարարել խիստ նկատողություն:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

_____ **Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

_____ **Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ _____

Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ

_____ **Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

_____ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ _____

ԷԴ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ